

Համաշխարհային փոստային միության ընդհանուր կանոնակարգ

(փոփոխված 2016 թվականի Ստամբուլի, 2018 թվականի Ադիս Աբեբայի եւ **2021 թվականի Աբիջանի** լրացուցիչ արձանագրություններով)¹

Բովանդակություն

Գլուխ I

Համագումարների, Վարչական խորհրդի, Փոստային շահագործման խորհրդի եւ Խորհրդատվական կոմիտեի կազմակերպումը, գործառույթները եւ գործունեությունը

Բաժին 1

Համագումարը

Հոդված

- 101 Համագումարների եւ Արտահերթ համագումարների կազմակերպումը եւ գումարումը
- 102 Համագումարների ժամանակ քվեարկելու իրավունքը
- 103 Համագումարների գործառույթները

¹ 2016 թվականի Ստամբուլի լրացուցիչ արձանագրության համար տե՛ս 2016 թվականին Բեռնում հրատարակված տեղեկաթերթիկի 33-ից 43-րդ էջերը:

Երկրորդ լրացուցիչ արձանագրության համար (2018 թվականի Ադիս Աբեբայի արտահերթ համագումար) տե՛ս 2018 թվականին Բեռնում հրատարակված տեղեկաթերթիկի 9-ից 25-րդ էջերը: Երրորդ լրացուցիչ արձանագրության համար (2021 թվական, Աբիջան) տե՛ս նույն տեղեկաթերթիկի 9-ից 25-րդ էջերը:

104 Համագումարների գործունեության կարգը

105 Դիտորդները Միության մարմիններում

Բաժին 2

Վարչական խորհուրդը (ՎԽ)

106 ՎԽ-ի կազմը եւ գործունեությունը

107 ՎԽ-ի գործառույթները

108 ՎԽ-ի նիստերի կազմակերպումը

109 Դիտորդները

110 Ճանապարհաձախսի փոխհատուցումը

111 Տեղեկատվություն ՎԽ-ի գործունեության վերաբերյալ

Բաժին 3

Փոստային շահագործման խորհուրդը (ՓՇԽ)

112 ՓՇԽ-ի կազմը եւ գործունեությունը

113 ՓՇԽ-ի գործառույթները

114 ՓՇԽ-ի նիստերի կազմակերպումը

115 ՓՇԽ-ի դիտորդները

116 Ճանապարհաձախսի փոխհատուցումը

117 Տեղեկատվություն ՓՇԽ-ի գործունեության վերաբերյալ

118 Միության մշտական մարմինների համակարգման կոմիտեն

Բաժին 4

Խորհրդատվական կոմիտեն (ԽԿ)

- 119 ԽԿ-ի նպատակը
- 120 ԽԿ-ի կազմը
- 121 ԽԿ-ին անդամակցությունը
- 122 ԽԿ-ի գործառույթները
- 123 ԽԿ-ի կազմակերպումը
- 124 Խորհրդատվական կոմիտեի ներկայացուցիչները Վարչական խորհրդում, Փոստային շահագործման խորհրդում եւ Համագումարում
- 125 ԽԿ-ի դիտորդները
- 126 Տեղեկատվություն ԽԿ-ի գործունեության վերաբերյալ

Գլուխ II

Միջազգային բյուրոն

Բաժին 1

Գլխավոր տնօրենի եւ գլխավոր տնօրենի տեղակալի ընտրությունն ու պարտականությունները

- 127 Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի եւ գլխավոր տնօրենի տեղակալի ընտրությունը
- 128 Գլխավոր տնօրենի պարտականությունները
- 129 Գլխավոր տնօրենի տեղակալի պարտականությունները

Բաժին 2

Միության մարմինների եւ Խորհրդատվական կոմիտեի քարտուղարությունը

- 130 Ընդհանուր դիտարկումներ
- 131 Միության մարմինների փաստաթղթերի կազմումը եւ բաշխումը
- 132 Անդամ երկրների ցանկը
- 133 Տեղեկատվություն: Կարծիքներ: Ակտերի բացատրությանը եւ փոփոխությանը ներկայացվող պահանջներ: Հարցումներ: Դերը հաշիվների կարգավորման գործում
- 134 Տեխնիկական համագործակցությունը
- 135 Միջազգային բյուրոյի կողմից տրամադրվող ձեւերը
- 136 Տարածաշրջանային միությունների ակտերը եւ Հատուկ համաձայնագրերը
- 137 Միության պարբերականը
- 138 Միության աշխատանքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը

Գլուխ III

Առաջարկություններ ներկայացնելը եւ քննարկելը, ընդունված որոշումների մասին ծանուցելը եւ Կանոնակարգն ու այլ ընդունված որոշումներ ուժի մեջ մտնելը

- 139 Համագումարին առաջարկություններ ներկայացնելու ընթացակարգը
- 140 139-րդ հոդվածի համաձայն ներկայացված առաջարկություններում փոփոխություններ կատարելու ընթացակարգը

- 141 Կոնվենցիայում կամ Համագումարների միջեւ առկա համաձայնագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու ընթացակարգը
- 142 Կոնվենցիայում կամ Համագումարների միջեւ առկա համաձայնագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների քննարկումը
- 143 Փոստային շահագործման խորհրդի կողմից Կանոնակարգում փոփոխություններ կատարելը
- 144 Համագումարների միջեւ ընդունված որոշումների մասին ծանուցելը
- 145 Կանոնակարգի եւ Համագումարների միջեւ ընդունված այլ որոշումների ուժի մեջ մտնելը

Գլուխ IV

Ֆինանսավորումը

- 146 Միության ծախսերի սահմանումը
- 147 Անդամ երկրների անդամավճարների կարգավորումը
- 148 Ֆինանսավորման անբավարարությունը
- 149 Հաշվապահական հաշվառման եւ հաշվետվությունների նկատմամբ վերահսկողությունը
- 150 Ավտոմատ պատժամիջոցները
- 151 Անդամավճարների դասերը
- 152 Միջազգային բյուրոյի կողմից տրամադրվող նյութերի համար վճարումը

- 153 Օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմինների կազմակերպումը

Գլուխ V

Արբիտրաժ

- 154 Արբիտրաժային ընթացակարգը

Գլուխ VI

Լեզուների օգտագործումը Միության շրջանակներում

- 155 Միջազգային բյուրոյի աշխատանքային լեզուները
- 156 Փաստաթղթավարության, քննարկումների եւ պաշտոնական նամակագրության համար օգտագործվող լեզուները

Գլուխ VII

Եզրափակիչ դրույթներ

- 157 Ընդհանուր կանոնակարգին վերաբերող առաջարկությունների ընդունման պայմանները
- 158 Միավորված ազգերի կազմակերպության հետ կնքվող համաձայնագրերին վերաբերող առաջարկությունները
- 159 Ընդհանուր կանոնակարգն ուժի մեջ մտնելը եւ գործողության ժամկետը

Համաշխարհային փոստային միության ընդհանուր կանոնակարգ²

(փոփոխված 2016 թվականի Ստամբուլի, 2018 թվականի Ադիս Աբեբայի եւ 2021 թվականի Աբիջանի լրացուցիչ արձանագրություններով)

Համաշխարհային փոստային միության (այսուհետ՝ Միություն) անդամ երկրների կառավարությունների ներքոստորագրյալ լիազոր ներկայացուցիչները, հիմնվելով 1964 թվականի հուլիսի 10-ին Վիեննայում ստորագրված **Միության Կանոնադրության 21.2** հոդվածի վրա, ընդհանուր համաձայնությամբ եւ հաշվի առնելով Կանոնադրության **24.3** եւ **5-րդ** հոդվածները, սույն Ընդհանուր կանոնակարգում կազմել են Կանոնադրության կիրառումը եւ Միության գործունեությունն ապահովող հետեւյալ դրույթները:

Գլուխ I

Համագումարների, Վարչական խորհրդի, Փոստային շահագործման խորհրդի եւ Խորհրդատվական կոմիտեի կազմակերպումը, գործառույթները եւ գործունեությունը

Բաժին 1.

Համագումարը

² Աբիջանի Համագումարի 39-րդ փաստաթղթի համաձայն՝ մի շարք փոփոխություններ են կատարվել Ընդհանուր կանոնակարգի անգլերեն տարբերակում՝ գենդերային առումով չեզոք լեզու կիրառելու նպատակով: Պայմանավորված այն հանգամանքով, որ այս խմբագրական փոփոխությունները չեն ազդում պաշտոնական ֆրանսերեն տեքստի վրա, սույն հատորում դրանք չեն նշվում որպես փոփոխություններ:

Հոդված 101

Համագումարների եւ Արտահերթ համագումարների կազմակերպումը եւ գումարումը

1 Անդամ երկրների ներկայացուցիչները Համագումար են հրավիրում ոչ ուշ, քան այն տարվա ավարտից չորս տարի հետո, որի ընթացքում տեղի է ունեցել նախորդ Համագումարը:

2 Յուրաքանչյուր անդամ երկիր կարող է Համագումարին ներկայացվել իր Կառավարության կողմից անհրաժեշտ լիազորություններով ապահովված մեկ կամ մի քանի լիազոր ներկայացուցիչների կողմից: Անհրաժեշտության դեպքում այն կարող է ներկայացվել մեկ այլ անդամ երկրի պատվիրակության կողմից: Այնուամենայնիվ, հարկավոր է հասկանալ, որ ցանկացած պատվիրակություն, իր սեփական երկրից բացի, կարող է ներկայացնել միայն մեկ անդամ երկիր:

3 Որպես կանոն, յուրաքանչյուր Համագումարի ժամանակ նշանակվում է այն երկիրը, որտեղ հաջորդ Համագումարն անցկացվելու է: Եթե այդ նշանակման կատարումն անհնար է, ապա Վարչական խորհուրդը լիազորված է նշանակելու երկիրը, որտեղ Համագումարը հրավիրվելու է՝ տվյալ երկրի հետ խորհրդակցելուց հետո:

4 Միջազգային բյուրոյի հետ խորհրդակցելուց հետո ընդունող կառավարությունը նշանակում է Համագումարի անցկացման վերջնական ամսաթիվը եւ տեղակայման ճշգրիտ վայրը: Որպես կանոն, այդ ամսաթվից մեկ տարի առաջ ընդունող կառավարությունը հրավեր է ուղարկում Միության յուրաքանչյուր անդամ երկրի կառավարությանը: Այդ հրավերը կարող է ուղարկվել ուղղակիորեն կամ մեկ այլ Կառավարության միջնորդությամբ կամ Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի միջոցով:

5 Առանց ընդունող կառավարության Համագումար հրավիրելու դեպքում Միջազգային բյուրոն Վարչական խորհրդի համաձայնությամբ եւ Շվեյցարիայի Համադաշնության կառավարության հետ խորհրդակցելուց հետո ձեռնարկում է անհրաժեշտ քայլեր՝ հրավիրելու եւ կազմակերպելու Համագումարն այն երկրում, որտեղ գտնվում է Միության նստավայրը: Այս դեպքում ընդունող կառավարության գործառույթներն իրականացնում է Միջազգային բյուրոն:

6 Արտահերթ համագումարի գումարման վայրը որոշում են այդ Համագումարը նախաձեռնած անդամ երկրները՝ Միջազգային բյուրոյի հետ խորհրդակցելուց հետո:

7 102-րդ հոդվածի 2-5-րդ կետերը համանման եղանակով կիրառվում են Արտահերթ համագումարների դեպքում:

Հոդված 102

Համագումարի ժամանակ քվեարկելու իրավունքը

Յուրաքանչյուր անդամ երկիր ունի մեկ ձայնի իրավունք, եթե չեն կիրառվում 150-րդ հոդվածով նախատեսված պատժամիջոցները:

Հոդված 103

Համագումարի գործառույթները

1 Հիմնվելով անդամ երկրների, Վարչական խորհրդի եւ Փոստային շահագործման խորհրդի առաջարկությունների վրա՝ Համագումարը՝

1.1 սահմանում է Կանոնադրության նախաբանում եւ 1-ին հոդվածում նշված Միության խնդիրների եւ նպատակի իրականացման ընդհանուր սկզբունքները,

1.2 ըստ անհրաժեշտության քննարկում եւ ընդունում է Կանոնադրության մեջ, Ընդհանուր կանոնակարգում, **Համաշխարհային փոստային կոնվենցիայում (այսուհետ՝ Կոնվենցիա)** եւ Համաձայնագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ անդամ երկրների եւ Խորհուրդների կողմից Կանոնադրության **27-րդ** հոդվածի եւ Ընդհանուր կանոնակարգի **139-րդ** հոդվածի համաձայն ներկայացված առաջարկությունները,

1.3 սահմանում է ակտերն ուժի մեջ մտնելու ամսաթիվը,

1.4 ընդունում է իր Գործունեության կարգը եւ այդ կարգի փոփոխությունները,

1.5 քննարկում է Վարչական խորհրդի, Փոստային շահագործման խորհրդի եւ Խորհրդատվական կոմիտեի աշխատանքների վերաբերյալ նախորդ Համագումարից հետո ընկած ժամանակահատվածը ներառող համապարփակ հաշվետվությունները, որոնք ներկայացվում են այդ համապատասխան մարմինների կողմից՝ Ընդհանուր կանոնակարգի 111-րդ, 117-րդ եւ 126-րդ հոդվածներին համապատասխան,

1.6 ընդունում է Միության ռազմավարությունը,

1.7 հաստատում է **Միության** քառամյա գործարար ծրագրի նախագիծը,

1.8 սահմանում է Միության ծախսերի առավելագույն չափը՝ Կանոնադրության **20-րդ** հոդվածին համապատասխան,

1.9 ընտրում է այն անդամ երկրները, որոնք ընդգրկվելու են Վարչական խորհրդի եւ Փոստային շահագործման խորհրդի կազմում՝ համաձայն, *inter alia*, այս հարցին վերաբերող Համագումարի բանաձեւերում ամրագրված ընտրական ընթացակարգերի,

1.10 ընտրում է Գլխավոր տնօրենին եւ գլխավոր տնօրենի տեղակալին,

1.11 Համագումարի բանաձեւում սահմանում է ծախսերի առավելագույն շեմը, որ Միությունը պետք է կրի փաստաթղթերը չինարեն, գերմաներեն, պորտուգալերեն եւ ռուսերեն ներկայացնելու համար:

2 Համագումարը, որպես Միության գերագույն մարմին, զբաղվում է փոստային ծառայություններին վերաբերող այլ հարցերով:

Հոդված 104

Համագումարների Գործունեության կարգը

1 Իր աշխատանքների կազմակերպման եւ քննարկումների իրականացման համար Համագումարը կիրառում է իր գործունեության կարգը:

2 Յուրաքանչյուր Համագումար կարող է փոփոխություններ կատարել իր Գործունեության կարգում՝ գործունեության այդ կարգում սահմանված պայմանների համաձայն:

3 1-ին եւ 2-րդ կետերն անալոգիայի սկզբունքով կիրառվում են նաեւ Արտահերթ համագումարների դեպքում:

Հոդված 105

Դիտորդները Միության մարմիններում

1 Ներքոհիշյալ կազմակերպությունները հրավիրվում են մասնակցելու Համագումարի, Վարչական խորհրդի եւ Փոստային շահագործման խորհրդի լիազումար նիստերին եւ կոմիտեի նիստերին որպես դիտորդներ.

1.1 Միավորված ազգերի կազմակերպությունը,

1.2 Տարածաշրջանային միությունները,

1.3 Խորհրդատվական կոմիտեի անդամները,

1.4 Միության նիստերին Համագումարի բանաձեւի կամ որոշման ուժով որպէս դիտորդներ մասնակցելու լիազորություն ունեցող կազմակերպությունները:

2 Ներքոհիշյալ կազմակերպությունները Վարչական խորհրդի կողմից 107-րդ հոդվածի 1.12 կետի համաձայն պատշաճ կերպով նշանակված լինելու դեպքում հրավիրվում են մասնակցելու Համագումարի հատուկ նիստերին՝ որպէս ad hoc (ժամանակավոր) դիտորդներ.

2.1 Միավորված ազգերի կազմակերպության եւ այլ միջկառավարական կազմակերպությունների մասնագիտացված գերատեսչությունները,

2.2 ցանկացած միջազգային մարմին, ցանկացած ասոցիացիա կամ ձեռնարկություն կամ ցանկացած որակավորված անձ:

3 Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված դիտորդներից բացի՝ Վարչական խորհուրդը եւ Փոստային շահագործման խորհուրդը կարող են նշանակել ad hoc (ժամանակավոր) դիտորդներ՝ մասնակցելու իրենց նիստերին՝ իրենց գործունեության կարգի համաձայն, եթե դա բխում է Միության եւ դրա մարմինների շահերից:

Բաժին 2

Վարչական խորհուրդը (ՎԽ)

Հոդված 106

ՎԽ-ի կազմը եւ գործունեությունը

1 Վարչական խորհուրդը բաղկացած է քառասունմեկ անդամներից, որոնք իրականացնում են իրենց գործառույթները երկու իրար հաջորդող Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածի ընթացքում:

2 Նախագահի դերն իրավունքի ուժով փոխանցվում է Համագումարի ընդունող անդամ երկրին: Եթե այդ անդամ երկիրը հրաժարվում է այս իրավունքից, ապա այն դառնում է *de jure* անդամ, եւ արդյունքում աշխարհագրական խումբը, որին այն պատկանում է, իր տրամադրության տակ ունենում է մեկ լրացուցիչ տեղ, որի նկատմամբ 3-րդ կետի սահմանափակող դրույթները չեն կիրառվում: Այդ դեպքում Վարչական խորհուրդն ընդունող անդամ երկրի աշխարհագրական խմբին պատկանող անդամներից մեկին ընտրում է որպես Նախագահ:

3 Վարչական խորհրդի մյուս քառասուն անդամներն ընտրվում են Համագումարի կողմից՝ համաչափ աշխարհագրական բաշխման հիման վրա: Յուրաքանչյուր Համագումարի անդամների առնվազն կեսը թարմացվում է, որեւէ անդամ երկիր չի կարող ընտրվել երեք իրար հաջորդող Համագումարներում: **Չսահմանափակելով վերը նշվածը՝ մեկ տեղ այն աշխարհագրական խմբում, որին պատկանում են որպես Խաղաղօվկիանոսյան կղզիների երկրներ եւ տարածաշրջաններ սահմանված (ըստ Միավորված ազգերի կազմակերպության կողմից սահմանված համապատասխան ցանկի) անդամ երկրները, վերապահվում է այդ անդամ երկրներին:**

4 Վարչական խորհրդի յուրաքանչյուր անդամ նշանակում է իր ներկայացուցչին (ներկայացուցիչներին): Վարչական խորհրդի անդամներն ակտիվորեն մասնակցում են դրա աշխատանքներին:

5 Վարչական խորհրդի անդամի պաշտոնը վճարովի չէ: Խորհրդի գործառնական ծախսերը կրում է Միությունը:

6 ՎԽ-ն սահմանում, ձեւավորում եւ (կամ) ստեղծում է մշտական խմբեր, հանձնախմբեր կամ այլ մարմիններ, որոնք պետք է ստեղծվեն իր կառույցում՝ պատշաճ կերպով հաշվի առնելով Համագումարի կողմից ընդունված Միության ռազմավարությունը եւ գործարար ծրագիրը:

Հոդված 107

ՎԽ-ի գործառույթները

1 Վարչական խորհուրդն ունի հետևյալ գործառույթները՝

1.1 վերահսկում է Միության ամբողջ գործունեությունը Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում՝ ապահովելով Համագումարի որոշումների կատարումը, ուսումնասիրելով փոստային ոլորտին վերաբերող պետական քաղաքականությունների հետ կապված հարցերը եւ հաշվի առնելով միջազգային օրենսդրության եւ կարգավորումների փոփոխությունները, ինչպիսիք են ծառայությունների առետրին եւ մրցակցությանը վերաբերող փոփոխությունները.

1.2 խթանում, համակարգում եւ վերահսկում է փոստային տեխնիկական աջակցության բոլոր ձեւերը միջազգային տեխնիկական համագործակցության շրջանակներում.

1.3 ուսումնասիրում է Համագումարի կողմից հաստատված **Միության** քառամյա գործարար ծրագրի նախագիծը եւ վերջնական տեսքի բերում՝ քառամյա ժամանակահատվածի ծրագրի նախագծում նշված գործողությունները համապատասխանեցնելով փաստացի հասանելի ռեսուրսների հետ: Ծրագիրը, ըստ անհրաժեշտության, պետք է համապատասխանի նաեւ Համագումարի կողմից իրականացվող՝ առաջնահերթությունների սահմանման գործընթացի արդյունքներին: ՎԽ-ի կողմից կազմված եւ հաստատված **Միության** քառամյա գործարար ծրագրի վերջնական տարբերակն այնուհետեւ հիմք կհանդիսանա տարեկան ծրագրի եւ բյուջեի, ինչպես նաեւ տարեկան գործառնական պլանների պատրաստման համար, որոնք պետք է կազմվեն եւ իրականացվեն ՎԽ-ի եւ ՓՇԽ-ի կողմից.

1.4 քննարկում եւ հաստատում է տարեկան ծրագիրը, բյուջեն եւ **Միության** հաշիվները՝ հաշվի առնելով Միության գործարար ծրագրի վերջնական տարբերակը՝ 107-րդ հոդվածի 1.3 կետում նկարագրված կարգով.

1.5 թույլատրում է հանգամանքների բերումով ծախսերի առավելագույն շեմի գերազանցում՝ **146-րդ հոդվածի 3-5-րդ կետերի** համաձայն.

1.6 թույլատրում է **151-րդ հոդվածի 5-րդ** կետով սահմանված պայմանների համաձայն անդամավճարի ավելի ցածր դասի ընտրություն՝ այդպիսի պահանջ ներկայացնելու դեպքում.

1.7 թույլատրում է աշխարհագրական խմբի փոփոխություն՝ անդամ երկրի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու դեպքում՝ հաշվի առնելով տվյալ աշխարհագրական խմբերի անդամ հանդիսացող անդամ երկրների արտահայտած տեսակետները.

1.8 ստեղծում կամ վերացնում է կանոնավոր բյուջեով ֆինանսավորվող Միջազգային բյուրոյի հաստիքները՝ հաշվի առնելով ծախսերի սահմանված առավելագույն շեմի սահմանափակումները.

1.9 որոշում է կայացնում անդամ երկրների հետ կապերի հաստատման վերաբերյալ՝ իր գործառույթներն իրականացնելու համար.

1.10 Փոստային շահագործման խորհրդի հետ խորհրդակցելուց հետո որոշում է կայացնում հարաբերությունների վերաբերյալ, որոնք պետք է հաստատել 105-րդ հոդվածի 1-ին կետի եւ 105-րդ հոդվածի 2.1 կետի իմաստով դիտորդ չհանդիսացող կազմակերպությունների հետ.

1.11 քննարկում է միջազգային այլ մարմինների հետ ՀՓՄ-ի հարաբերությունների վերաբերյալ Միջազգային բյուրոյի հաշվետվությունները եւ ընդունում այդ հարաբերությունների պահպանման եւ դրանց առնչությամբ ձեռնարկվելիք այնպիսի գործողությունների վերաբերյալ որոշումներ, որոնք նպատակահարմար է համարում.

1.12 Փոստային շահագործման խորհրդի եւ Գլխավոր քարտուղարի հետ խորհրդակցելուց հետո պատշաճ ժամկետում նշանակում է Միավորված ազգերի կազմակերպության մասնագիտացված գերատեսչությունները, միջազգային

կազմակերպությունները, ասոցիացիաները, ձեռնարկությունները եւ որակավորված անձանց, որոնք պետք է հրավիրվեն որպես ad hoc (ժամանակավոր) դիտորդներ Համագումարի եւ դրա կոմիտեների հատուկ նիստերին, եթե դա բխում է Միության կամ Համագումարի աշխատանքների շահերից եւ հանձնարարում է Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին ուղարկել անհրաժեշտ հրավերները.

1.13 նշանակում է այն անդամ երկիրը, որտեղ 101-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքում պետք է անցկացվի հաջորդ Համագումարը:

1.14 պատշաճ ժամկետում եւ Փոստային շահագործման խորհրդի հետ քննարկելուց հետո որոշում է Համագումարի աշխատանքների կատարման համար անհրաժեշտ կոմիտեների թիվը եւ սահմանում դրանց գործառույթները.

1.15 Փոստային շահագործման խորհրդի հետ խորհրդակցելուց հետո եւ Համագումարի հաստատման դեպքում նշանակում է այն անդամ երկրներին, որոնք պատրաստված են՝

1.15.1 զբաղեցնելու Համագումարի փոխնախագահների եւ կոմիտեների նախագահների ու փոխնախագահների պաշտոնները՝ հնարավորինս հաշվի առնելով անդամ երկրների համաչափ աշխարհագրական բաշխումը, եւ

1.15.2 հանդես գալու որպես Համագումարի տարածաշրջանային կոմիտեների անդամներ.

1.16 նշանակում է իր այն անդամներին, որոնք հանդես են գալու որպես Խորհրդատվական կոմիտեի անդամներ.

1.17 իր իրավասության շրջանակներում քննարկում եւ հաստատում է ցանկացած գործողություն, որն անհրաժեշտ է համարվում միջազգային փոստային ծառայությունների որակն ապահովելու եւ բարձրացնելու եւ այդ ծառայություններն արդիականացնելու համար.

1.18 Համագումարի, Փոստային շահագործման խորհրդի կամ անդամ երկրների պահանջով ուսումնասիրում է Միության կամ միջազգային փոստային ծառայություններին վերաբերող վարչական, օրենսդրական եւ իրավական խնդիրները. վերոնշյալ ոլորտներում Վարչական խորհուրդն է որոշում՝ արդյոք նպատակահարմար է իրականացնել անդամ երկրների կողմից պահանջվող ուսումնասիրությունները Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածում.

1.19 ձեակերպում է առաջարկությունները, որոնք **142-րդ** հոդվածի համաձայն ներկայացվում են Համագումարի կամ անդամ երկրների հաստատմանը.

1.20 ուսումնասիրության առարկաներ է ներկայացնում Փոստային շահագործման խորհրդի քննությանը՝ 113-րդ հոդվածի 1.6 կետի համաձայն.

1.21 խորհրդակցելով Փոստային շահագործման խորհրդի հետ՝ վերանայում եւ հաստատում է Ռազմավարության նախագիծը՝ Համագումարին ներկայացնելու համար.

1.22 ստանում եւ քննարկում է Խորհրդատվական կոմիտեի հաշվետվություններն ու առաջարկությունները եւ դիտարկում Խորհրդատվական կոմիտեի առաջարկությունները՝ Համագումարին ներկայացնելու համար.

1.23 հսկողություն է իրականացնում Միջազգային բյուրոյի գործունեության նկատմամբ.

1.24 հաստատում է Միության աշխատանքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը եւ Միջազգային բյուրոյի կողմից պատրաստված ֆինանսական գործունեության տարեկան հաշվետվությունները եւ անհրաժեշտության դեպքում ներկայացնում դիտարկումներ դրանց վերաբերյալ.

1.25 անհրաժեշտության դեպքում սահմանում է սկզբունքներ, որոնք Փոստային շահագործման խորհուրդը պետք է հաշվի առնի լուրջ ֆինանսական հետեւանքներ առաջացնող հարցերի ուսումնասիրության ժամանակ (վճարներ, վերջնական վճարներ, տարանցիկ վճարներ, ավիափոստի փոխադրման

հիմնական դրույքաչափեր եւ գրավոր նամակագրության առաքում արտասահման), ուշադիր հետեւում է այդ հարցերի ուսումնասիրությանը եւ վերոհիշյալ սկզբունքներին համապատասխանելու նպատակով վերանայում ու հաստատում է այդ հարցերին վերաբերող Փոստային շահագործման խորհրդի առաջարկությունները.

1.26 իր իրավասության շրջանակներում հաստատում է Փոստային շահագործման խորհրդի առաջարկությունները՝ անհրաժեշտության դեպքում կանոնակարգեր կամ նոր ընթացակարգ ընդունելու համար, մինչեւ որ Համագումարն այդ հարցի վերաբերյալ որոշում կայացնի.

1.27 քննարկում է Փոստային շահագործման խորհրդի կողմից պատրաստված տարեկան հաշվետվությունը եւ Խորհրդի կողմից ներկայացված ցանկացած առաջարկություն.

1.28 Փոստային շահագործման խորհրդի հետ խորհրդակցությամբ հաստատում է Միջազգային բյուրոյի պատրաստած քառամյա հաշվետվությունը նախորդ Համագումարի կողմից հաստատված Միության ռազմավարության կատարման մասով անդամ երկրների կատարողականի վերաբերյալ՝ հաջորդ Համագումարին ներկայացնելու համար.

1.29 սահմանում է Խորհրդատվական կոմիտեի կազմակերպման շրջանակը եւ համաձայնություն է տալիս Խորհրդակցական կոմիտեի կազմակերպման վերաբերյալ՝ **123-րդ** հոդվածի դրույթներին համապատասխան.

1.30 սահմանում է Խորհրդատվական կոմիտեին անդամակցելու չափանիշները եւ **չեղյալ է հայտարարում անդամակցությունն ըստ այն չափանիշների, որոնք մանրամասն ներկայացվում են 123-րդ հոդվածում նշված համապատասխան գործունեության կարգում.**

1.31 սահմանում է Միության ֆինանսական կանոնակարգը.

1.32 սահմանում է պահուստային հիմնադրամի կարգավորման կանոնները.

1.33 սահմանում է հատուկ հիմնադրամի կարգավորման կանոնները.

1.34 սահմանում է հատուկ գործունեության հիմնադրամի կարգավորման կանոնները.

1.35 սահմանում է կամավոր հիմնադրամի կարգավորման կանոնները.

1.36 սահմանում է Աշխատակազմի կանոնակարգը եւ ընտրված պաշտոնյաների ծառայության պայմանները.

1.37 սահմանում է սոցիալական հիմնադրամի կանոնակարգը.

1.38 153-րդ հոդվածի համատեքստում իրականացնում է ամբողջական վերահսկողություն օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմինների ստեղծման եւ գործունեության նկատմամբ.

1.39 ընդունում է իր Գործունեության կարգը եւ այդ կարգի փոփոխությունները:

Հոդված 108

ՎԽ-ի նիստերի կազմակերպումը

1 Հիմնադիր նիստում, որը հրավիրում եւ բացում է Համագումարի նախագահը, Վարչական խորհուրդն **իր անդամներից** ընտրում է չորս փոխնախագահ: Նախագահը եւ չորս փոխնախագահը Միության յուրաքանչյուր հինգ աշխարհագրական խմբի անդամ երկրներից են:

2 Վարչական խորհուրդը գումարվում է տարին երկու անգամ կամ լրացուցիչ՝ բացառիկ դեպքերում, Միության գլխավոր գրասենյակում՝ իր Գործունեության կարգում սահմանված համապատասխան ընթացակարգերի համաձայն:

3 Վարչական խորհրդի նախագահը եւ փոխնախագահները, Կոմիտեի նախագահները, համանախագահները եւ փոխնախագահները կազմում են

Կառավարման կոմիտե: Այս կոմիտեն նախապատրաստում եւ ղեկավարում է Վարչական խորհրդի յուրաքանչյուր նիստի աշխատանքները: Այն Վարչական խորհրդի անունից հաստատում է Միջազգային բյուրոյի պատրաստած Միության աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը, ինչպես նաեւ ստանձնում է ցանկացած այլ հանձնառություն, որը Վարչական խորհուրդը որոշում է հանձնարարել իրեն, կամ որի անհրաժեշտությունն առաջանում է ռազմավարական պլանավորման գործընթացի ընթացքում:

4 Փոստային շահագործման խորհրդի նախագահը ներկայացնում է այդ մարմինը Վարչական խորհրդի նիստերին, երբ օրակարգում կան Փոստային շահագործման խորհրդին հետաքրքրող հարցեր:

5 Խորհրդատվական կոմիտեի նախագահը ներկայացնում է այդ մարմինը Վարչական խորհրդի նիստերին, երբ օրակարգում կան Խորհրդատվական կոմիտեին վերաբերող հարցեր:

Հոդված 109

Դիտորդները

1 Դիտորդները

1.1 Երկու մարմինների կատարած աշխատանքների միջեւ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար Փոստային շահագործման խորհուրդը կարող է նշանակել ներկայացուցիչներ՝ Վարչական խորհրդի նիստերին որպես դիտորդներ մասնակցելու համար:

1.2 Խորհրդի անդամ չհանդիսացող Միության անդամ երկրները, ինչպես նաեւ 105-րդ հոդվածում նշված դիտորդները եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդները կարող են մասնակցել Վարչական խորհրդի լիազույժար նիստերին եւ կոմիտեի նիստերին՝ առանց քվեարկելու իրավունքի:

2 Սկզբունքները

2.1 Նյութատեխնիկական նկատառումներից ելնելով՝ Վարչական խորհուրդը կարող է սահմանափակել մասնակիցների թիվը՝ ըստ մասնակցող դիտորդների եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդների թվի: Այն կարող է սահմանափակել նաեւ քննարկումների ընթացքում նրանց խոսելու իրավունքը:

2.2 Դիտորդներին եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդներին իրենց խնդրանքով կարող են թույլատրել համագործակցել ձեռնարկվող ուսումնասիրությունների շուրջ այն պայմաններով, որոնք Խորհուրդը կարող է սահմանել իր աշխատանքի արդյունավետությունն ու օգտավետությունն ապահովելու համար: Նրանք կարող են հրավիրվել նաեւ նախագահելու մշտական խմբերը եւ հանձնախմբերը, եթե ունեն համապատասխան գիտելիքներ կամ փորձ: Դիտորդների եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդների մասնակցությունն իրականացվում է առանց Միության համար լրացուցիչ ծախսերի:

2.3 Բացառիկ հանգամանքներում Խորհրդատվական կոմիտեի անդամները եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդները կարող են հեռացվել նիստից կամ նիստի մի մասից, կամ կարող է սահմանափակվել փաստաթղթեր ստանալու նրանց իրավունքը, եթե նիստի կամ փաստաթղթի առարկայի գաղտնիությունը դա է պահանջում: Այս սահմանափակման մասին որոշումը կարող է կայացվել շահագրգիռ ցանկացած մարմնի կամ դրա Նախագահի կողմից՝ կոնկրետ դեպքից ելնելով: Կոնկրետ դեպքի հետ կապված իրավիճակների մասին զեկուցվում է Վարչական խորհրդին եւ Փոստային շահագործման խորհրդին, երբ շոշափվում են Փոստային շահագործման խորհրդին հետաքրքրող հարցեր: Անհրաժեշտ համարվելու դեպքում Վարչական խորհուրդն այնուհետեւ կարող է վերանայել սահմանափակումները՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով Փոստային շահագործման խորհրդի հետ:

Հոդված 110

Ճանապարհաձախսի փոխհատուցումը

Վարչական խորհրդի անդամների՝ դրա **նիստերին մասնակցող ներկայացուցիչների** ճանապարհաձախսը կրում է **նրանց** անդամ երկիրը: Այնուամենայնիվ, Վարչական խորհրդի եւ Միավորված ազգերի կազմակերպության կողմից համապատասխանաբար սահմանված ցանկերի համաձայն որպես զարգացող կամ առավել քիչ զարգացած երկրներ դասակարգված յուրաքանչյուր անդամ երկրի մեկ ներկայացուցիչ, բացառությամբ Համագումարի ընթացքում տեղի ունեցող նիստերի, իրավունք ունի ստանալու էկոնոմ դասի հետադարձ ավիատոմսի **եւ (կամ)** առաջին կարգի հետադարձ երկաթուղային տոմսի գնի կամ որեւէ այլ եղանակով ճանապարհորդության համար կատարված ծախսերի փոխհատուցում, **վերջին դեպքում՝** պայմանով, որ գումարը չգերազանցի էկոնոմ դասի հետադարձ ավիատոմսի գինը: Նույն իրավունքը տրամադրվում է իր կոմիտեների կամ այլ մարմինների յուրաքանչյուր անդամի, եթե նրանք հանդիպում են Համագումարից եւ Խորհրդի նիստերից դուրս:

Հոդված 111

Տեղեկատվություն ՎԽ-ի գործունեության վերաբերյալ

1 Յուրաքանչյուր նիստից հետո Վարչական խորհուրդը տեղեկացնում է անդամ երկրներին եւ նրանց կողմից նշանակված օպերատորներին, Տարածաշրջանային միություններին եւ Խորհրդատվական կոմիտեի անդամներին իր գործունեության մասին՝ ուղարկելով նրանց, *inter alia*, ամփոփ արձանագրությունը եւ իր կողմից ընդունված բանաձեւերն ու որոշումները:

2 Վարչական խորհուրդը Համագումարին ներկայացնում է համապարփակ հաշվետվություն իր աշխատանքի վերաբերյալ եւ Համագումարի բացումից առնվազն երկու ամիս առաջ այն ուղարկում է Միության անդամ երկրներին, նրանց կողմից նշանակված օպերատորներին եւ Խորհրդատվական կոմիտեի անդամներին:

Բաժին 3

Փոստային շահագործման խորհուրդը (ՓՇԽ)

Հոդված 112

ՓՇԽ-ի կազմը եւ գործունեությունը

1 Փոստային շահագործման խորհուրդը բաղկացած է քառասունութ անդամից, որոնք իրականացնում են իրենց գործառույթներն իրար հաջորդող Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածի ընթացքում:

2 Փոստային շահագործման խորհրդի անդամներն ընտրվում են Համագումարի կողմից՝ որակյալ աշխարհագրական բաշխման հիման վրա: Յուրաքանչյուր աշխարհագրական խմբի անդամների առնվազն մեկ երրորդը թարմացվում է յուրաքանչյուր Համագումարում: **Չսահմանափակելով վերը նշվածը՝ մեկ տեղ այն աշխարհագրական խմբում, որին պատկանում են որպես Խաղաղօվկիանոսյան կղզիների երկրներ եւ տարածաշրջաններ սահմանված (ըստ Միավորված ազգերի կազմակերպության կողմից սահմանված համապատասխան ցանկի) անդամ երկրները, վերապահվում է այդ անդամ երկրներին:**

3 Փոստային շահագործման խորհրդի յուրաքանչյուր անդամ նշանակում է իր ներկայացուցչին (ներկայացուցիչներին): Փոստային շահագործման խորհրդի անդամներն ակտիվորեն մասնակցում են դրա աշխատանքներին:

4 Փոստային շահագործման խորհրդի գործառնական ծախսերը կրում է Միությունը: Դրա անդամները որեւէ վճարում չեն ստանում:

5 Փոստային շահագործման խորհուրդը սահմանում, ձեւավորում եւ (կամ) կազմում է մշտական խմբեր, հանձնախմբեր, օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմիններ կամ այլ մարմիններ, որոնք պետք է ստեղծվեն իր կառույցում՝ պատշաճ կերպով հաշվի առնելով Համագումարի կողմից ընդունված Միության ռազմավարությունը եւ գործարար ծրագիրը:

Հոդված 113

ՓՇԽ-ի գործառույթները

1 Փոստային շահագործման խորհուրդն ունի հետեւյալ գործառույթները՝

1.1 համակարգում է միջազգային փոստային ծառայությունների զարգացմանն ու բարելավմանն ուղղված գործնական միջոցառումները.

1.2 Վարչական խորհրդի իրավասության շրջանակում դրա կողմից հաստատման դեպքում ձեռնարկում է ցանկացած գործողություն, որն անհրաժեշտ է համարվում միջազգային փոստային ծառայությունների որակն ապահովելու եւ բարձրացնելու եւ այդ ծառայություններն արդիականացնելու համար.

1.3 որոշում է կայացնում կապերի վերաբերյալ, որոնք պետք է հաստատել անդամ երկրների եւ նրանց կողմից նշանակված օպերատորների հետ՝ իր գործառույթներն իրականացնելու համար.

1.4 ձեռնարկում է անհրաժեշտ քայլեր ուսումնասիրելու եւ հանրայնացնելու կոնկրետ անդամ երկրների եւ նրանց կողմից նշանակված օպերատորների՝ տեխնիկական, գործառնական, տնտեսական եւ մասնագիտական վերապատրաստման ոլորտներում կատարած փորձերը եւ առաջընթացը, որոնք հետաքրքրում են այլ անդամ երկրների եւ նրանց կողմից նշանակված օպերատորներին.

1.5 խորհրդակցելով Վարչական խորհրդի հետ՝ ձեռնարկում է համապատասխան քայլեր Միության բոլոր անդամ երկրների եւ նրանց կողմից նշանակված օպերատորների եւ մասնավորապես՝ նոր եւ զարգացող երկրների ու նրանց կողմից նշանակված օպերատորների հետ տեխնիկական համագործակցության ոլորտում.

1.6 ուսումնասիրում է Փոստային շահագործման խորհրդի անդամի, Վարչական խորհրդի կամ ցանկացած անդամ երկրի կամ նշանակված օպերատորի կողմից իրեն ներկայացված ցանկացած այլ հարց.

1.7 ստանում եւ քննարկում է Խորհրդատվական կոմիտեի հաշվետվությունները, ինչպես նաեւ առաջարկությունները, եթե ուսումնասիրվում են Փոստային շահագործման խորհրդին հետաքրքրող հարցեր, քննում եւ մեկնաբանություններ է ներկայացնում Խորհրդատվական կոմիտեի առաջարկությունների վերաբերյալ՝ Համագումարին ներկայացնելու նպատակով.

1.8 նշանակում է իր այն անդամներին, որոնք հանդես են գալու որպես Խորհրդատվական կոմիտեի անդամներ.

1.9 իրականացնում է ամենակարեւոր գործառնական, առեւտրային, տեխնիկական, տնտեսական եւ տեխնիկական համագործակցության խնդիրների ուսումնասիրություն, որոնք հետաքրքրում են բոլոր անդամ երկրներին կամ նրանց կողմից նշանակված օպերատորներին, այդ թվում՝ լուրջ ֆինանսական հետեւանքներ առաջացնող հարցերի ուսումնասիրություն (վճարներ, վերջնական վճարներ, տարանցիկ վճարներ, ավիափոստի փոխադրման դրույքաչափեր, փոստային ծանրոցների ծառայության դրույքաչափեր եւ գրավոր նամակագրության առաքում արտասահման), ինչպես նաեւ պատրաստում է տեղեկություններ, կարծիքներ եւ առաջարկություններ՝ դրանց մասով գործողություններ իրականացնելու համար.

1.10 իր կարծիքն է ներկայացնում Վարչական խորհուրդ՝ Համագումարին ներկայացվող Միության ռազմավարության նախագծի եւ **Միության** քառամյա գործարար ծրագրի նախագծի մշակման վերաբերյալ:

1.11 ուսումնասիրում է անդամ երկրներին եւ նրանց կողմից նշանակված օպերատորներին, ինչպես նաեւ նոր եւ զարգացող երկրներին հետաքրքրող ուսուցման եւ մասնագիտական վերապատրաստման խնդիրները.

1.12 ուսումնասիրում է նոր եւ զարգացող երկրների ներկա վիճակն ու կարիքները եւ պատրաստում համապատասխան առաջարկություններ՝ նրանց փոստային ծառայությունները բարելավելու եղանակների եւ միջոցների վերաբերյալ:

1.13 վերանայում է Restricted Unions կանոնակարգերը. **այս առումով** Փոստային շահագործման խորհուրդը հիմնական քաղաքականության եւ սկզբունքների հարցերի մասով ենթարկվում է Վարչական խորհրդի ցուցումներին.

1.14 ձեւակերպում է առաջարկություններ, որոնք **142-րդ** հոդվածի համաձայն ներկայացվում են Համագումարի կամ անդամ երկրների հաստատմանը. Վարչական խորհրդի հաստատումը պահանջվում է, եթե այդ առաջարկությունները վերաբերում են նրա իրավասության շրջանակում գտնվող հարցերին.

1.15 անդամ երկրի պահանջով ուսումնասիրում է ցանկացած առաջարկություն, որն այդ անդամ երկիրը **141-րդ** հոդվածի համաձայն ուղարկում է Միջազգային բյուրո, ներկայացնում է դիտարկումներ դրա վերաբերյալ եւ կարգադրում Միջազգային բյուրոյին այդ դիտարկումները կցելու առաջարկությանը՝ նախքան այն անդամ երկրների հաստատմանը ներկայացնելը.

1.16 խորհուրդ է տալիս անհրաժեշտության եւ նպատակահարմար լինելու դեպքում Վարչական խորհրդի կողմից հաստատվելուց եւ բոլոր անդամ երկրների հետ խորհրդակցելուց հետո ընդունել կանոնակարգեր կամ նոր ընթացակարգ՝ մինչեւ Համագումարի կողմից այդ հարցի վերաբերյալ որոշում կայացնելը.

1.17 իր իրավասության շրջանակներում պատրաստում եւ առաջարկությունների ձեւով (կամ որպես պարտադիր դրույթներ, եթե Միության

ակտերով այդպես է նախատեսվում) անդամ երկրներին ու նրանց կողմից նշանակված օպերատորներին է ներկայացնում տեխնոլոգիական, գործառնական եւ այլ գործընթացների չափանիշներ, որտեղ կարելու է գործելակերպի միատեսակությունը. նույն կերպ անհրաժեշտության դեպքում ներկայացնում է նաեւ իր կողմից արդեն սահմանված չափանիշներում կատարած փոփոխությունները.

1.18 սահմանում է օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմինների կազմակերպման շրջանակը եւ համաձայնություն է տալիս այդ մարմինների կազմակերպման վերաբերյալ՝ **153-րդ** հոդվածի դրույթներին համապատասխան.

1.19 ստանում եւ քննարկում է օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմինների տարեկան կտրվածքով ներկայացվող հաշվետվությունները.

1.20 ընդունում է իր Գործունեության կարգը եւ այդ կարգի փոփոխությունները:

Հոդված 114

ՓՇԽ-ի նիստերի կազմակերպումը

1 Առաջին նիստի ժամանակ, որը հրավիրում եւ բացում է Համագումարի նախագահը, Փոստային շահագործման խորհուրդն իր անդամներից ընտրում է նախագահ եւ փոխնախագահներ եւ կոմիտեների նախագահներ/փոխնախագահներ/համանախագահներ: Նախագահը եւ չորս փոխնախագահները Միության յուրաքանչյուր հինգ աշխարհագրական խմբի անդամ երկրներից են:

2 Փոստային շահագործման խորհուրդը գումարվում է տարին երկու անգամ կամ լրացուցիչ՝ բացառիկ դեպքերում՝ Միության գլխավոր գրասենյակում՝ իր Գործունեության կարգում սահմանված համապատասխան ընթացակարգերի համաձայն:

3 Փոստային շահագործման խորհրդի նախագահը եւ փոխնախագահները, Կոմիտեի նախագահները, համանախագահները եւ փոխնախագահները կազմում են Կառավարման կոմիտե: Կոմիտեն պատրաստում եւ ղեկավարում է Փոստային շահագործման խորհրդի յուրաքանչյուր նիստի աշխատանքները եւ ստանձնում բոլոր հանձնառությունները, որոնք Փոստային շահագործման խորհուրդը որոշում է հանձնարարել իրեն, կամ որոնց անհրաժեշտությունն առաջանում է ռազմավարական պլանավորման գործընթացի ընթացքում:

4 Հիմնվելով Համագումարի կողմից ընդունված Միության ռազմավարության եւ մասնավորապես՝ Միության մշտական մարմինների ռազմավարություններին վերաբերող հատվածի վրա՝ Փոստային շահագործման խորհուրդը Համագումարին հաջորդող իր նիստում պատրաստում է աշխատանքային հիմնական ծրագիր, որը պարունակում է ռազմավարությունների իրականացմանն ուղղված մի շարք մարտավարություններ: Աշխատանքային այս հիմնական ծրագիրը, որը ներառում է ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող արդիական թեմաների վերաբերյալ սահմանափակ թվով նախագծեր, վերանայվում է ամեն տարի՝ նոր իրողությունների եւ առաջնահերթությունների լույսի ներքո:

5 Խորհրդատվական կոմիտեի նախագահը ներկայացնում է այդ կազմակերպությունը Փոստային շահագործման խորհրդի նիստերին, երբ օրակարգում կան Խորհրդատվական կոմիտեին հետաքրքրող հարցեր:

Հոդված 115

Դիտորդները

1 Դիտորդները

1.1 Երկու մարմինների միջեւ արդյունավետ համագործակցության ապահովման նպատակով Վարչական խորհուրդը կարող է նշանակել ներկայացուցիչներ՝ Փոստային շահագործման խորհրդի նիստերին որպես դիտորդներ մասնակցելու նպատակով:

1.2 Խորհրդի անդամ չհանդիսացող Միության անդամ երկրները, ինչպես նաեւ 105-րդ հոդվածում նշված դիտորդները եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդները կարող են մասնակցել Փոստային շահագործման խորհրդի լիազումար նիստերին եւ կոմիտեի նիստերին՝ առանց քվեարկելու իրավունքի:

2 Սկզբունքները

2.1 Նյութատեխնիկական նկատառումներից ելնելով՝ Փոստային շահագործման խորհուրդը կարող է սահմանափակել մասնակիցների թիվը՝ ըստ մասնակցող դիտորդների եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդների թվի: Այն կարող է սահմանափակել նաեւ քննարկումների ընթացքում նրանց խոսելու իրավունքը:

2.2 Դիտորդներին եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդներին իրենց խնդրանքով կարող են թույլատրել համագործակցել ձեռնարկվող ուսումնասիրությունների շուրջ այն պայմաններով, որ Խորհուրդը կարող է սահմանել իր աշխատանքի արդյունավետությունն ու օգտավետությունն ապահովելու համար: Նրանք կարող են հրավիրվել նաեւ նախագահելու մշտական խմբերը եւ հանձնախմբերը, եթե ունեն համապատասխան գիտելիքներ կամ փորձ: Դիտորդների եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդների մասնակցությունն իրականացվում է առանց Միության համար լրացուցիչ ծախսերի:

2.3 Բացառիկ հանգամանքներում Խորհրդատվական կոմիտեի անդամները եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդները կարող են հեռացվել նիստից կամ նիստի մի մասից, կամ կարող է սահմանափակվել փաստաթղթեր ստանալու նրանց իրավունքը, եթե նիստի կամ փաստաթղթի առարկայի գաղտնիությունը դա է պահանջում: Այս սահմանափակման մասին որոշումը կարող է կայացվել շահագրգիռ ցանկացած մարմնի կամ դրա Նախագահի կողմից՝ կոնկրետ դեպքից ելնելով: Կոնկրետ դեպքի հետ կապված իրավիճակների մասին զեկուցվում է Վարչական խորհրդին եւ Փոստային շահագործման խորհրդին, երբ ուսումնասիրվում են Փոստային շահագործման խորհրդին հետաքրքրող հարցեր: Անհրաժեշտության դեպքում Վարչական խորհուրդն այնուհետեւ կարող է վերանայել սահմանափակումները՝ անհրաժեշտության դեպքում խորհրդակցելով Փոստային շահագործման խորհրդի հետ:

Հոդված 116

Ճանապարհաձախսի փոխհատուցումը

Փոստային շահագործման խորհրդի անդամների՝ դրա **նիստերին մասնակցող** ներկայացուցիչների **ճանապարհաձախսը** հոգում է նրանց անդամ երկիրը: Այնուամենայնիվ, Միավորված ազգերի կազմակերպության կողմից սահմանված ցանկի համաձայն որպես առավել քիչ զարգացած երկրներ դասակարգված յուրաքանչյուր անդամ երկրի մեկ ներկայացուցիչ, բացառությամբ Համագումարի ընթացքում տեղի ունեցող նիստերի, իրավունք ունի ստանալու էկոնոմ դասի հետադարձ ավիատոմսի **եւ (կամ)** առաջին կարգի հետադարձ երկաթուղային տոմսի գնի կամ որեւէ այլ եղանակով ճանապարհորդության համար կատարված ծախսերի փոխհատուցում, **վերջին դեպքում՝** պայմանով, որ գումարը չգերազանցի էկոնոմ դասի հետադարձ ավիատոմսի գինը:

Հոդված 117

Տեղեկատվություն ՓՇԽ-ի գործունեության վերաբերյալ

1 Յուրաքանչյուր նիստից հետո Փոստային շահագործման խորհուրդը տեղեկացնում է անդամ երկրներին եւ նրանց կողմից նշանակված օպերատորներին, Տարածաշրջանային միավորումներին եւ Խորհրդատվական կոմիտեի անդամներին իր գործունեության մասին՝ ուղարկելով նրանց, *inter alia*, ամփոփ արձանագրությունը եւ իր կողմից ընդունված բանաձեւերն ու որոշումները:

2 Փոստային շահագործման խորհուրդը պատրաստում է իր աշխատանքի վերաբերյալ տարեկան հաշվետվություն՝ Վարչական խորհուրդ ներկայացնելու համար:

3 Փոստային շահագործման խորհուրդը Համագումար է ներկայացնում համապարփակ հաշվետվություն իր աշխատանքի վերաբերյալ, ինչպես նաեւ հաշվետվություններ՝ օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմինների վերաբերյալ՝ 153-րդ հոդվածով նախատեսված կարգով, եւ Համագումարի բացումից առնվազն երկու ամիս առաջ այն ուղարկում Միության անդամ երկրներին, նրանց կողմից նշանակված օպերատորներին եւ Խորհրդատվական կոմիտեի անդամներին:

Հոդված 118

Միության մշտական մարմինների համակարգման կոմիտեն

1 ՎԽ-ի նախագահը, ՓՇԽ-ի նախագահը եւ Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենը ձեւավորում են Միության մշտական մարմինների համակարգման կոմիտեն (<Կ):

2 ՀԿ-ն ունի հետեւյալ լիազորություններն ու գործառույթները՝

2.1 նպաստել Միության մշտական մարմինների աշխատանքների համակարգմանը.

2.2 անհրաժեշտության դեպքում հանդիպել՝ Միությանը եւ փոստային ծառայություններին վերաբերող կարեւոր հարցեր քննարկելու եւ Միության մարմիններին այդ հարցերի վերաբերյալ գնահատում տրամադրելու համար.

2.3 ապահովել ռազմավարական պլանավորման գործընթացի պատշաճ իրականացումն այնպես, որ Միության գործունեությանը վերաբերող բոլոր որոշումները համապատասխան մարմինների կողմից ընդունվեն իրենց համապատասխան պարտավորությունների համաձայն՝ Միության ակտերով սահմանված կարգով:

3 Գումարվելով ՎԽ-ի նախագահի կողմից՝ ՀԿ-ի նիստը տեղի է ունենում տարին երկու անգամ Միության գլխավոր գրասենյակում: Նիստերի ամսաթիվն ու տեղը սահմանվում են ՎԽ-ի նախագահի կողմից՝ ՓՇԽ-ի նախագահի եւ Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի հետ համաձայնությամբ:

Բաժին 4

Խորհրդատվական կոմիտեն (ԽԿ)

Հոդված 119

ԽԿ-ի նպատակը

Խորհրդատվական կոմիտեի նպատակն է ներկայացնել միջազգային ավելի լայն փոստային հատվածի շահերը եւ ապահովել արդյունավետ երկխոսության շրջանակ շահագրգիռ կողմերի միջեւ:

Հոդված 120

ԽԿ-ի կազմը

1 Խորհրդատվական կոմիտեի կազմում ընդգրկված են՝

1.1 ոչ պետական կազմակերպություններ (**այդ թվում՝** հաճախորդներին, առաքման ծառայություններ տրամադրողներին, փոստի աշխատակիցներին կամ **փոստային ոլորտի գործատուներին ներկայացնող կազմակերպություններ**), **բարեգործական ձեռնարկություններ, ստանդարտացման, ֆինանսական եւ զարգացման հարցերով կազմակերպություններ**, փոստային ծառայությունների ոլորտին ապրանքներ եւ ծառայություններ մատակարարողներ, տրանսպորտային ձեռնարկություններ եւ մասնավոր հատվածի այլ ձեռնարկություններ, ինչպես նաեւ կազմակերպություններ կամ անհատներ եւ ընկերություններ, որոնք շահագրգռված են աջակցելու Միության առաքելությանը եւ նպատակներին.

1.2 անդամ երկրների կամ Միության համապատասխան մարմինների, այդ թվում՝ Խորհրդատվական կոմիտեի կողմից առաջարկված՝ փոստային ոլորտից բարձրաստիճան անձինք:

2 Խորհրդատվական կոմիտեի բոլոր անդամները պետք է հիմնադրվեն (եւ համապատասխան անդամ երկրի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու դեպքում՝ պատշաճ կերպով գրանցվեն) կամ 1.2-րդ կետում նշված բարձրաստիճան անձանց դեպքում՝ մշտական բնակություն ունենան Միության անդամ երկրում:

3 Խորհրդատվական կոմիտեի գործառնական ծախսերը բաշխվում են Խորհրդատվական կոմիտեի անդամների միջեւ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Վարչական խորհրդի կողմից այլ բան է որոշվում: Այս առումով եւ ինչպես հետագայում նշվում է Խորհրդատվական կոմիտեի գործունեության կարգում, կարող են կիրառվել անդամակցության տարբեր վճարներ՝ կախված Խորհրդատվական կոմիտեի անդամների կոնկրետ իրավական բնույթից եւ ֆինանսական հնարավորություններից:

4 Խորհրդատվական կոմիտեի անդամները վարձատրություն կամ որեւէ այլ փոխհատուցում չեն ստանում:

Հոդված 121

ԽԿ-ին անդամակցությունը

1 **Անդամակցությունը** Խորհրդատվական կոմիտեին որոշվում է հայտի եւ Վարչական խորհրդի կողմից հաստատված ընդունման գործընթացի միջոցով եւ իրականացվում է համաձայն 107-րդ հոդվածի 1.30-րդ կետի:

2 **Խորհրդատվական կոմիտեին անդամակցելու ցանկացած հարցում՝ ներկայացված 120-րդ հոդվածում նշված ձեռնարկությունների կամ բարձրաստիճան անձանց կողմից, ուղեկցվում է նախնական գրավոր թույլտվությամբ կամ Միության համապատասխան անդամ երկրի առաջարկությամբ՝ համաձայն 120-րդ հոդվածի 2-րդ կետի:**

3 Խորհրդատվական կոմիտեի յուրաքանչյուր անդամ նշանակում է իր սեփական ներկայացուցչին (ներկայացուցիչներին):

Հոդված 122

ԽԿ-ի գործառույթները

1 Խորհրդատվական կոմիտեն ունի հետեւյալ գործառույթները՝

1.1 ուսումնասիրում է Վարչական խորհրդի եւ Փոստային շահագործման խորհրդի փաստաթղթերը եւ հաշվետվությունները: Բացառիկ հանգամանքներում կարող է սահմանափակվել կոնկրետ տեքստեր եւ փաստաթղթեր ստանալու իրավունքը, եթե նիստի կամ փաստաթղթի առարկայի գաղտնիությունը դա է պահանջում՝ **համաձայն 109-րդ հոդվածի 2.3-րդ կետի եւ 115-րդ հոդվածի 2.3-րդ կետի.**

1.2 իրականացնում է Խորհրդատվական կոմիտեի անդամների համար կարելություն ունեցող հարցերի ուսումնասիրությունը եւ նպաստում դրան.

1.3 ուսումնասիրում է փոստային ծառայությունների ոլորտի վրա ազդեցություն ունեցող հարցերը եւ պատրաստում հաշվետվություններ այդ հարցերի վերաբերյալ.

1.4 իր կարծիքն է ներկայացնում Վարչական խորհրդի եւ Փոստային շահագործման խորհրդի աշխատանքների վերաբերյալ՝ այդ թվում ներկայացնելով հաշվետվություններ եւ առաջարկություններ եւ տալով **կարծիքներ** երկու Խորհուրդներին.

1.5 առաջարկություններ է ներկայացնում Համագումարին, որոնք ենթակա են Վարչական խորհրդի հաստատմանը եւ Փոստային շահագործման խորհրդին հետաքրքրող հարցեր լինելու դեպքում ենթակա են Փոստային շահագործման խորհրդի ուսումնասիրությանը եւ մեկնաբանությանը:

Հոդված 123

ԽԿ-ի կազմակերպումը

1 Յուրաքանչյուր Համագումարից հետո Խորհրդատվական կոմիտեն վերակազմակերպվում է՝ համաձայն Վարչական խորհրդի կողմից հաստատված շրջանակի: Խորհրդատվական կոմիտեի կազմակերպման նիստը նախագահում է Վարչական խորհրդի նախագահը. այդ նիստի ընթացքում ընտրվում է Կոմիտեի նախագահը:

2 Խորհրդատվական կոմիտեն որոշում է իր ներքին կազմակերպական կարգը եւ մշակում իր սեփական գործունեության կարգը՝ հաշվի առնելով Միության ընդհանուր սկզբունքները եւ Վարչական խորհրդի համաձայնության պայմանով՝ Փոստային շահագործման խորհրդի հետ խորհրդակցելուց հետո:

3 Խորհրդատվական կոմիտեն հանդիպում է տարին մեկ անգամ: Որպես կանոն, նիստերն անցկացվում են Միության գլխավոր գրասենյակում՝ Փոստային շահագործման խորհրդի նիստերի հետ միաժամանակ: Յուրաքանչյուր նիստի ամսաթիվն ու տեղը սահմանվում է Խորհրդատվական կոմիտեի նախագահի կողմից՝ Վարչական խորհրդի եւ Փոստային շահագործման խորհրդի նախագահների եւ Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի հետ համաձայնությամբ:

Հոդված 124

Խորհրդատվական կոմիտեի ներկայացուցիչները Վարչական խորհրդում, Փոստային շահագործման խորհրդում եւ Համագումարում

1 Միության մարմինների հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով Խորհրդատվական կոմիտեն կարող է նշանակել ներկայացուցիչներ՝ որպես դիտորդներ մասնակցելու Համագումարի, Վարչական խորհրդի եւ Փոստային շահագործման խորհրդի եւ դրանց համապատասխան կոմիտեների նիստերին՝ առանց քվեարկելու իրավունքի:

2 Խորհրդատվական կոմիտեի անդամները հրավիրվում են Վարչական խորհրդի եւ Փոստային շահագործման խորհրդի լիազումար նիստերին եւ կոմիտեի նիստերին՝ 105-րդ հոդվածին համապատասխան: Նրանք կարող են մասնակցել նաեւ մշտական խմբերի եւ հանձնախմբերի աշխատանքներին՝ 109-րդ հոդվածի 2.2-րդ կետով եւ 115-րդ հոդվածի 2.2-րդ կետով սահմանված պայմաններով:

3 Վարչական խորհրդի նախագահը եւ Փոստային շահագործման խորհրդի նախագահը ներկայացնում են այդ մարմինները Խորհրդատվական կոմիտեի նիստերին, երբ այդ նիստերի օրակարգում ընդգրկված են այդ մարմիններին հետաքրքրող հարցեր:

Հոդված 125

ԽԿ-ի դիտորդները

1 Միության **անդամ** երկրները եւ 105-րդ հոդվածում նշված դիտորդներն ու ad hoc (ժամանակավոր) դիտորդները կարող են մասնակցել Խորհրդատվական կոմիտեի նիստերին՝ առանց քվեարկելու իրավունքի:

2 Կազմակերպչական նկատառումներից ելնելով՝ Խորհրդատվական կոմիտեն կարող է սահմանափակել մասնակիցների թիվը՝ ըստ մասնակցող դիտորդների եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդների թվի: Այն կարող է սահմանափակել նաեւ քննարկումների ընթացքում նրանց խոսելու իրավունքը:

3 Բացառիկ հանգամանքներում դիտորդները եւ ad hoc (ժամանակավոր) դիտորդները կարող են հեռացվել նիստից կամ նիստի մի մասից, կամ կարող է սահմանափակվել փաստաթղթեր ստանալու նրանց իրավունքը, եթե նիստի կամ փաստաթղթի առարկայի գաղտնիությունն այդ է պահանջում: Այս սահմանափակման մասին որոշումը կարող է կայացվել շահագրգիռ ցանկացած մարմնի կամ դրա Նախագահի կողմից՝ կոնկրետ դեպքից ելնելով: Կոնկրետ դեպքի հետ կապված իրավիճակների մասին զեկուցվում է Վարչական խորհրդին եւ Փոստային շահագործման խորհրդին, երբ շոշափվում են Փոստային շահագործման խորհրդին հետաքրքրող հարցեր: Անհրաժեշտության դեպքում Վարչական խորհուրդն այնուհետեւ կարող է վերանայել սահմանափակումները՝ ըստ անհրաժեշտության խորհրդակցելով Փոստային շահագործման խորհրդի հետ:

Հոդված 126

Տեղեկատվություն ԽԿ-ի գործունեության վերաբերյալ

1 Յուրաքանչյուր նիստից հետո Խորհրդատվական կոմիտեն Վարչական խորհրդին եւ Փոստային շահագործման խորհրդին տեղեկացնում է իր գործունեության մասին՝ այդ մարմինների նախագահներին ուղարկելով, *inter alia*, իր նիստերի ամփոփ արձանագրությունը եւ իր առաջարկություններն ու տեսակետները:

2 Խորհրդատվական կոմիտեն Վարչական խորհուրդ է ներկայացնում գործունեության տարեկան հաշվետվություն՝ պատճենը ներկայացնելով Փոստային շահագործման խորհուրդ: Այդ հաշվետվությունը ներառվում է 111-րդ հոդվածի համաձայն Միության անդամ երկրներին, նրանց կողմից նշանակված օպերատորներին եւ Տարածաշրջանային միություններին Վարչական խորհրդի կողմից տրամադրվող փաստաթղթերում:

3 Խորհրդատվական կոմիտեն Համագումարին ներկայացնում է համապարփակ հաշվետվություն իր աշխատանքի վերաբերյալ եւ Համագումարի բացումից առնվազն երկու ամիս առաջ այն ուղարկում է անդամ երկրներին եւ նրանց կողմից նշանակված օպերատորներին:

Գլուխ II

Միջազգային բյուրոն

Բաժին 1

Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի եւ գլխավոր տնօրենի տեղակալի ընտրությունն ու պարտականությունները

Հոդված 127

Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի եւ գլխավոր տնօրենի տեղակալի ընտրությունը

1 Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենը եւ գլխավոր տնօրենի տեղակալն ընտրվում են Համագումարի կողմից երկու իրար հաջորդող Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածով, որոնց պաշտոնավարման նվազագույն տեւողությունը չորս տարի է: Նրանց պաշտոնավարման ժամկետը երկարաձգվում է միայն մեկ անգամ: Եթե Համագումարն այլ բան չի որոշում, ապա նրանց կողմից իրենց պարտականությունները ստանձնելու ամսաթիվը սահմանվում է Համագումարի անցկացմանը հաջորդող տարվա հունվարի 1-ը:

2 Համագումարի բացումից առնվազն յոթ ամիս առաջ Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենը Հուշագիր է ուղարկում անդամ երկրների կառավարություններ՝ կոչ անելով նրանց ներկայացնելու իրենց հայտերը, առկայության դեպքում՝ գլխավոր տնօրենի եւ գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնների համար եւ միեւնոյն ժամանակ նշելով, թե արդյոք գործող գլխավոր տնօրենը եւ գլխավոր տնօրենի տեղակալը շահագրգռված են իրենց սկզբնական պաշտոնավարման ժամկետի երկարաձգմամբ: Հայտերը, որոնք ուղեկցվում են

ինքնակենսագրականով, պետք է հասնեն Միջազգային բյուրո Համագումարի բացումից առնվազն երկու ամիս առաջ: Թեկնածուները պետք է լինեն նրանց առաջադրող անդամ երկրների քաղաքացիներ: Միջազգային բյուրոն նախապատրաստում է ընտրության փաստաթղթերը Համագումարին ներկայացնելու համար: Գլխավոր տնօրենի եւ գլխավոր տնօրենի տեղակալի ընտրությունը տեղի է ունենում գաղտնի քվեարկությամբ, առաջին ընտրությունը՝ գլխավոր տնօրենի պաշտոնի համար:

3 Գլխավոր տնօրենի պաշտոնը թափուր մնալու դեպքում գլխավոր տնօրենի գործառույթները ստանձնում է գլխավոր տնօրենի տեղակալը՝ մինչեւ վերջինիս պաշտոնավարման ժամկետի ավարտը. գլխավոր տնօրենի տեղակալն իրավունք ունի ընտրվելու այդ պաշտոնում եւ ավտոմատ կերպով ընդունվում է որպես թեկնածու՝ պայմանով, որ գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնավարման սկզբնական ժամկետը նախորդ Համագումարում արդեն մեկ անգամ չի երկարաձգվել, եւ որ գլխավոր տնօրենի տեղակալը հայտարարի գլխավոր տնօրենի պաշտոնի թեկնածու համարվելու իր շահագրգռվածության մասին:

4 Գլխավոր տնօրենի եւ գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնները միեւնույն ժամանակ թափուր մնալու դեպքում Վարչական խորհուրդը, թափուր տեղերի մասին ծանուցումից հետո ստացած հայտերի հիման վրա, ընտրում է գլխավոր տնօրենի տեղակալ՝ մինչեւ հաջորդ Համագումարը ժամանակահատվածով: Հայտերի ներկայացման կապակցությամբ 2-րդ կետը կիրառվում է համանման կարգով:

5 Գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնի թափուր մնալու դեպքում Վարչական խորհուրդը գլխավոր տնօրենի առաջարկով հանձնարարում է Միջազգային բյուրոյի S2 կարգ ունեցող տնօրեններից մեկին՝ ստանձնելու գլխավոր տնօրենի տեղակալի գործառույթները մինչեւ հաջորդ Համագումարը:

Հոդված 128

Գլխավոր տնօրենի պարտականությունները

1 Գլխավոր տնօրենը Միության իրավաբանական ներկայացուցիչն է:

2 Գլխավոր տնօրենը կազմակերպում, կառավարում եւ ղեկավարում է Միջազգային բյուրոն:

3 Պաշտոնների դասակարգման, նշանակումների եւ պաշտոնի բարձրացման առնչությամբ՝

3.1 գլխավոր տնօրենը լիազորված է դասակարգելու Գ1-ից S2 աստիճանների պաշտոնները եւ նշանակելու պաշտոնյաների կամ բարձրացնելու նրանց պաշտոնն այդ աստիճաններում.

3.2 Պ1-ից S2 աստիճաններում նշանակումներ կատարելու համար գլխավոր տնօրենը դիտարկում է **անդամ երկրի** քաղաքացու կամ **անդամ երկրում** մասնագիտական գործունեություն իրականացնող թեկնածուների մասնագիտական որակավորումները՝ հաշվի առնելով աշխարհագրական **եւ լեզվական** համաչափ բաշխումը եւ **գենդերային հավասարակշռությունը**: S2 կարգի պաշտոնները հնարավորինս պետք է զբաղեցվեն այն թեկնածուների կողմից, որոնք տարբեր տարածաշրջաններից են, ինչպես նաեւ գլխավոր տնօրենի եւ գլխավոր տնօրենի տեղակալի ծագման տարածաշրջաններից բացի այլ տարածաշրջաններից՝ հաշվի առնելով Միջազգային **բյուրոյի** արդյունավետության առաջնային նշանակությունը.

3.3 նոր պաշտոնյա նշանակելիս գլխավոր տնօրենը պետք է դիտարկի նաեւ այն, որ S2, S1 եւ Պ5 աստիճանների պաշտոնները զբաղեցնող անձինք, որպես կանոն, պետք է լինեն Միության տարբեր անդամ երկրների քաղաքացիներ.

3.4 S2, S1 եւ Պ5 աստիճաններում Միջազգային բյուրոյի պաշտոնյալի պաշտոնի բարձրացման դեպքում գլխավոր տնօրենը պարտավոր չէ կիրառել **3.3** կետով նախատեսված սկզբունքը.

3.5 աշխատանքի ընդունման գործընթացում արժանիքներն աշխարհագրական եւ լեզվական համաչափ բաշխման եւ **գենդերային հավասարակշռության** մասով ներկայացվող պահանջներից առաջնային են.

3.6 գլխավոր տնօրենը տարին մեկ անգամ տեղեկացնում է Վարչական խորհրդին Պ4-ից S2 աստիճաններում նշանակումների եւ պաշտոնի բարձրացման մասին:

4 Բացի այդ, գլխավոր տնօրենն ունի հետեւյալ պարտականությունները՝

4.1 հանդես է գալիս որպէս Միության ակտերի ավանդապահ եւ որպէս միջնորդ Միությանը միանալու եւ Միություն ընդունվելու եւ Միությունից դուրս գալու գործընթացում.

4.2 անդամ երկրների բոլոր կառավարություններին ծանուցում է Համագումարում ընդունված որոշումների մասին.

4.3 բոլոր անդամ երկրներին եւ նրանց կողմից նշանակված օպերատորներին ծանուցում է Փոստային շահագործման խորհրդի կողմից կազմված կամ լրամշակված կանոնակարգերի մասին.

4.4 հնարավորինս ցածր մակարդակով պատրաստում է Միության տարեկան բյուջեի նախագիծը՝ Միության պահանջներին համահունչ, եւ ժամանակին այն ներկայացնում Վարչական խորհրդի քննարկմանը. Վարչական խորհրդի կողմից հաստատվելուց հետո բյուջեն ներկայացնում է Միության անդամ երկրներին եւ կատարում այն.

4.5 իրականացնում է Միության մարմինների կողմից պահանջվող եւ ակտերով գլխավոր տնօրենին վերապահված հատուկ գործողությունները.

4.6 ձեռնարկում է գործողություններ՝ Միության մարմինների կողմից սահմանված նպատակներին հասնելու համար՝ սահմանված քաղաքականության եւ առկա միջոցների շրջանակներում.

4.7 ներկայացնում է առաջարկներ եւ առաջարկություններ Վարչական խորհուրդ կամ Փոստային շահագործման խորհուրդ.

4.8 Համագումարի փակումից հետո Փոստային շահագործման խորհուրդ առաջարկություններ է ներկայացնում Համագումարի որոշումների արդյունքում պահանջվող Կանոնակարգերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ՝ համաձայն Փոստային շահագործման խորհրդի գործունեության կարգի.

4.9 Վարչական խորհրդի համար եւ խորհուրդների կողմից տրված հրահանգների հիման վրա պատրաստում է Միության ռազմավարության նախագիծը եւ ՀՓՄ-ի քառամյա գործարար ծրագրի նախագիծը, որը պետք է ներկայացվի Համագումարին.

4.10 Վարչական խորհրդի հաստատման նպատակով պատրաստում է նախորդ Համագումարում հաստատված Միության ռազմավարության մասով անդամ երկրների գործունեության քառամյա հաշվետվությունը, որը պետք է ներկայացվի հաջորդ Համագումարին.

4.11 որպես միջնորդ հանդես է գալիս՝

4.11.1 Միության եւ տարածաշրջանային միությունների,

4.11.2 Միության եւ Միավորված ազգերի կազմակերպության,

4.11.3 Միության եւ այն միջազգային կազմակերպությունների միջեւ հարաբերություններում, որոնք գործում են Միության հետաքրքրությունների շրջանակում,

4.11.4 Միության եւ այն միջազգային կազմակերպությունների կամ ասոցիացիաների կամ ձեռնարկությունների միջեւ հարաբերություններում, որոնց հետ Միության մարմինները ցանկանում են խորհրդակցել կամ համագործակցել՝ կապված իրենց աշխատանքների հետ.

4.12 ստանձնում է Միության մարմինների գլխավոր քարտուղարի պարտականությունները եւ իրականացնում վերահսկողություն այդ պաշտոնում՝ հաշվի առնելով սույն Ընդհանուր կանոնակարգի հատուկ դրույթները՝ մասնավորապես՝

4.12.1 Միության մարմինների աշխատանքների նախապատրաստումը եւ կազմակերպումը,

4.12.2 փաստաթղթերի, հաշվետվությունների եւ արձանագրությունների նախապատրաստումը, կազմումը եւ տարածումը,

4.12.3 քարտուղարության գործառույթները Միության մարմինների նիստերին.

4.13 ներկա է գտնվում Միության մարմինների նիստերին եւ մասնակցում քննարկումներին առանց ձայնի իրավունքի՝ ներկայացված լինելու հնարավորությամբ:

Հոդված 129

Գլխավոր տնօրենի տեղակալի պարտականությունները

1 Գլխավոր տնօրենի տեղակալն օգնում է Գլխավոր տնօրենին եւ հաշվետու է վերջինիս:

2 Եթե գլխավոր տնօրենը բացակա է կամ չի կարող կատարել իր պարտականությունները, ապա այդ գործառույթներն իրականացնում է գլխավոր տնօրենի տեղակալը: Նույնը կիրառվում է գլխավոր տնօրենի պաշտոնի թափուր լինելու դեպքում՝ **127-րդ հոդվածի 3-րդ** կետում նշված կարգով:

Բաժին 2

Միության մարմինների եւ Խորհրդատվական կոմիտեի քարտուղարությունը

Հոդված 130

Ընդհանուր դիտարկումներ

Միության մարմինների եւ Խորհրդատվական կոմիտեի քարտուղարության աշխատանքն ապահովում է Միջազգային բյուրոն՝ գլխավոր տնօրենի պատասխանատվությամբ:

Հոդված 131

Միության մարմինների փաստաթղթերի կազմումը եւ բաշխումը

1 Միջազգային բյուրոն պատրաստում եւ Միության կայքի միջոցով հասանելի է դարձնում հրապարակված բոլոր փաստաթղթերը՝ **156-րդ** հոդվածում նշված լեզուներով կազմված տարբերակներով՝ համաձայն Վարչական խորհրդի եւ Փոստային շահագործման խորհրդի գործունեության կարգի: Միության կայքում արդյունավետ վեբ-ազդանշանային համակարգի միջոցով Միջազգային բյուրոն նշում է նաեւ, մասնավորապես՝ անդամ երկրների ներկայացուցիչների համար, նոր էլեկտրոնային փաստաթղթերի հրապարակումների մասին:

2 Բացի այդ, Միջազգային բյուրոն անձամբ տարածում է Միության հրապարակումները, ինչպիսիք են Միջազգային բյուրոյի շրջաբերականները եւ ՎԽ-ի եւ ՓՇԽ-ի ամփոփ արձանագրությունները՝ միայն առանձին անդամ երկրի խնդրանքով:

Հոդված 132

Անդամ երկրների ցանկը

Միջազգային բյուրոն կազմում եւ թարմացնում է Միության անդամ երկրների ցանկը՝ դրանում ցույց տալով նրանց անդամավճարի դասը, նրանց աշխարհագրական խումբը եւ Միության ակտերին համապատասխան նրանց դիրքորոշումը:

Հոդված 133

Տեղեկատվություն: Կարծիքներ: Ակտերի բացատրությանը եւ փոփոխությանը ներկայացվող պահանջներ: Հարցումներ: Դերը հաշիվների կարգավորման գործում

1 Միջազգային բյուրոն մշտապես գտնվում է Վարչական խորհրդի, Փոստային շահագործման խորհրդի եւ անդամ երկրների եւ նրանց կողմից նշանակված օպերատորների տրամադրության տակ՝ նրանց ծառայություններին առնչվող հարցերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

2 Այն մասնավորապես հավաքագրում, համադրում, հրապարակում եւ տարածում է **փոստային** ծառայություններին առնչվող տարբեր բնույթի տեղեկություններ, կարծիք է հայտնում կամ **համապատասխան կողմերի պահանջով վեճերի կարգավորման ծառայություններ է տրամադրում (վերջին դեպքում վճարովի հիմունքով եւ Վարչական խորհրդի կողմից ընդունված համապատասխան ընթացակարգերի համաձայն)** վիճելի հարցերի վերաբերյալ, բավարարում է Միության ակտերի հետ կապված բացատրությունների եւ փոփոխությունների մասով հարցումները եւ ընդհանուր առմամբ իրականացնում է այնպիսի ուսումնասիրություններ եւ խմբագրական կամ փաստաթղթերի հետ

կապված աշխատանքներ, որոնք հանձնարարված են իրեն այդ ակտերով, կամ որոնք կարող են փոխանցվել իրեն՝ Միության շահերից ելնելով:

3 Այն կարող է նաեւ անդամ երկրների եւ նրանց կողմից նշանակված օպերատորների պահանջով իրականացնել հարցումներ՝ կոնկրետ հարցի վերաբերյալ այլ անդամ երկրների եւ նրանց կողմից նշանակված օպերատորների տեսակետները ստանալու նպատակով: Հարցման արդյունքը չի դիտարկվում որպես քվեարկություն եւ պաշտոնապես պարտադիր ուժ չունի:

4 Այն կարող է հանդես գալ որպես քլիրինգային գործակալ՝ փոստային ծառայություններին առնչվող բոլոր տեսակի հաշիվների կարգավորման գործում:

5 Միջազգային բյուրոն ապահովում է անդամ երկրների եւ (կամ) նրանց կողմից նշանակված օպերատորների կողմից տրամադրված առետրային տվյալների գաղտնիությունն ու անվտանգությունը՝ Միության ակտերից կամ որոշումներից բխող իր պարտականությունների կատարման համար:

Հոդված 134

Տեխնիկական համագործակցությունը

Միջազգային բյուրոն զարգացնում է փոստային տեխնիկական աջակցությունն իր բոլոր ձեւերով՝ միջազգային տեխնիկական համագործակցության շրջանակներում:

Հոդված 135

Միջազգային բյուրոյի կողմից տրամադրվող ձեւերը

Միջազգային բյուրոն պատասխանատվություն է կրում միջազգային պատասխան կտրոնների պատրաստումը կազմակերպելու եւ դրանք պատվիրող անդամ երկրներին կամ նրանց կողմից նշանակված օպերատորներին ինքնարժեքով տրամադրելու համար:

Հոդված 136

Տարածաշրջանային միությունների ակտերը եւ Հատուկ համաձայնագրերը

1 Տարածաշրջանային միությունների ակտերի եւ Կանոնադրության 9-րդ հոդվածի համաձայն կնքված Հատուկ համաձայնագրերի երկու օրինակներն այդ Միությունների գրասենյակների կողմից, իսկ դրանց կողմից դա չանելու դեպքում՝ պայմանավորվող կողմերից մեկի կողմից ուղարկվում են Միջազգային բյուրո:

2 Միջազգային բյուրոն հետեւում է, որ Տարածաշրջանային միությունների ակտերը եւ Հատուկ համաձայնագրերը չներառեն հանրության համար պակաս բարենպաստ պայմաններ, քան Միության ակտերով նախատեսված պայմաններն են: Այն ծանուցում է Վարչական խորհրդին սույն դրույթի կիրառմամբ հայտնաբերված ցանկացած խախտման մասին:

3 Միջազգային բյուրոն տեղեկացնում է անդամ երկրներին եւ նրանց կողմից նշանակված օպերատորներին վերոնշյալ Տարածաշրջանային միությունների եւ Հատուկ համաձայնագրերի գոյության մասին:

Հոդված 137

Միության պարբերականը

Միջազգային բյուրոն իրեն հասանելի փաստաթղթերի օգնությամբ հրատարակում է պարբերական արաբերենով, չինարենով, անգլերենով, ֆրանսերենով, գերմաներենով, ռուսերենով եւ իսպաներենով:

Հոդված 138

Միության աշխատանքի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը

Միջազգային բյուրոն պատրաստում է տարեկան հաշվետվություն Միության աշխատանքների վերաբերյալ, որը Վարչական խորհրդի կառավարման կոմիտեի կողմից հաստատվելուց հետո ուղարկվում է անդամ երկրներին եւ (կամ) նշանակված օպերատորներին, Տարածաշրջանային միություններին եւ Միավորված ազգերի կազմակերպություն:

Գլուխ III

Առաջարկություններ ներկայացնելը եւ քննարկելը, ընդունված որոշումների մասին ծանուցելը եւ Կանոնակարգն ու այլ ընդունված որոշումներն ուժի մեջ մտնելը

Հոդված 139

Համագումարին առաջարկություններ ներկայացնելու ընթացակարգը

1 Հաշվի առնելով 2-րդ եւ 5-րդ կետերով նախատեսված բացառությունները՝ անդամ երկրների կողմից Համագումարին ներկայացվող բոլոր տեսակի առաջարկությունները կարգավորվում են հետեւյալ ընթացակարգերով՝

1.1 առաջարկությունները, որոնք հասնում են Միջազգային բյուրո Համագումարի համար սահմանված ամսաթվից առնվազն **չորս** ամիս առաջ, ընդունվում են.

1.2 որեւէ նախագծային առաջարկություն չի ընդունվում Համագումարի համար սահմանված ամսաթվին նախորդող **չորս** ամսվա ընթացքում.

1.3 ըստ էության առաջարկությունները, որոնք հասնում են Միջազգային բյուրո Համագումարի համար սահմանված ամսաթվից առաջ՝ **չորս** եւ **երեք** ամիսների միջեւ ընկած ժամանակահատվածում, չեն ընդունվում, եթե դրանց չեն աջակցում առնվազն երկու անդամ երկրներ.

1.4 ըստ էության առաջարկությունները, որոնք հասնում են Միջազգային բյուրո Համագումարի համար սահմանված ամսաթվից առաջ՝ **երեք** եւ երկու ամիսների միջեւ ընկած ժամանակահատվածում, չեն ընդունվում, եթե դրանց չեն աջակցում առնվազն ութ անդամ երկրներ. այդ ժամկետից հետո ստացված առաջարկություններն այլեւս չեն ընդունվում.

1.5 աջակցելու վերաբերյալ հայտարարությունները պետք է հասնեն Միջազգային բյուրո նույն ժամանակահատվածում, ինչ առաջարկությունը, որին դրանք վերաբերում են:

2 Կանոնադրությանը կամ Ընդհանուր կանոնակարգին վերաբերող առաջարկությունները պետք է հասնեն Միջազգային բյուրո ոչ ուշ, քան Համագումարի բացումից **չորս** ամիս առաջ. ցանկացած առաջարկություն, որը ստացվում է այդ ամսաթվից հետո, սակայն մինչեւ Համագումարի բացումը, չի ուսումնասիրվում, եթե Համագումարը դրանում ներկայացված անդամ երկրների երկու երրորդի մեծամասնությամբ այդ մասին որոշում չի կայացնում, եւ եթե չեն կատարվում 1-ին կետում սահմանված պայմանները:

3 Յուրաքանչյուր առաջարկություն, որպես կանոն, պետք է ունենա միայն մեկ նպատակ եւ պարունակի միայն այդ նպատակով հիմնավորված փոփոխություններ: Նույն կերպ, յուրաքանչյուր առաջարկություն, որը կարող է զգալի ծախսեր առաջացնել Միության համար, պետք է ուղեկցվի դրա ֆինանսական ազդեցության վերաբերյալ նշումով՝ պատրաստված առաջարկությունը ներկայացնող անդամ երկրի կողմից՝ խորհրդակցելով Միջազգային բյուրոյի հետ, որպեսզի հնարավոր լինի որոշում կայացնել դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների վերաբերյալ:

4 Առաջարկությունների նախագծերը դրանք ներկայացնող անդամ երկրների կողմից վերնագրվում են «Առաջարկությունների նախագծեր», եւ հրապարակվում Միջազգային բյուրոյի կողմից «Ռ» տառին հաջորդող թվի ներքո: Առաջարկությունները, որոնց վրա առկա չէ այս նշումը, որոնք, սակայն, Միջազգային բյուրոյի կարծիքով վերաբերում են միայն նախագծային կետերին, հրապարակվում են համապատասխան ծանոթագրությամբ. Միջազգային բյուրոն կազմում է այդ առաջարկությունների ցանկը Համագումարին ներկայացնելու համար:

5 1-ին եւ 4-րդ կետերում սահմանված ընթացակարգը չի կիրառվում ո՛չ Համագումարների Գործունեության կարգերին վերաբերող առաջարկությունների,

ո՛չ Վարչական խորհրդի կամ Փոստային շահագործման խորհրդի կողմից ներկայացված առաջարկությունների նկատմամբ:

Հոդված 140

139-րդ հոդվածի համաձայն ներկայացված առաջարկություններում փոփոխություններ կատարելու ընթացակարգը

Առաջարկություններում արդեն կատարված փոփոխությունները, **այդ թվում** նաեւ Վարչական խորհրդի կամ Փոստային շահագործման խորհրդի կողմից ներկայացված փոփոխությունները **կարող են** ներկայացվել Միջազգային բյուրո՝ Համագումարների գործունեության կարգերի դրույթներին համապատասխան:

Հոդված 141

Կոնվենցիայում կամ Համագումարների միջեւ առկա համաձայնագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու ընթացակարգը

1 Ուսումնասիրման ենթակա լինելու համար Համագումարների միջեւ որեւէ անդամ երկրի կողմից ներկայացված՝ Կոնվենցիային կամ Համաձայնագրերին վերաբերող յուրաքանչյուր առաջարկություն պետք է ստանա առնվազն երկու այլ անդամ երկրների աջակցությունը: Այդ առաջարկությունները կորցնում են իրենց ուժը, եթե Միջազգային բյուրոն միեւնույն ժամանակ չի ստանում աջակցության մասին անհրաժեշտ թվով հայտարարություններ:

2 Այդ առաջարկություններն ուղարկվում են մյուս անդամ երկրներ Միջազգային բյուրոյի միջնորդությամբ:

Հոդված 142

Կոնվենցիայում կամ Համագումարների միջև առկա համաձայնագրերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունների քննարկումը

1 Կանոնադրությանը, Համաձայնագրերին եւ դրանց Եզրափակիչ արձանագրություններին վերաբերող ցանկացած առաջարկություն ենթարկվում է հետեւյալ ընթացակարգին. եթե անդամ երկիրն առաջարկությունն ուղարկում է Միջազգային բյուրո, ապա վերջինս ուղարկում է այն բոլոր անդամ երկրներ՝ ուսումնասիրելու համար: Նրանց տրվում է 45-օրյա ժամկետ՝ առաջարկությունն ուսումնասիրելու եւ ցանկացած դիտարկում Միջազգային բյուրո ուղարկելու համար: Փոփոխություններ չեն կարող կատարվել: Նշված 45 օրը լրանալուց հետո Միջազգային բյուրոն անդամ երկրներ է ուղարկում բոլոր դիտարկումները, որ ստացել է եւ կոչ է անում յուրաքանչյուր անդամ երկրի կողմ կամ դեմ քվեարկել առաջարկությանը: Այն անդամ երկրները, որոնց ձայները Միջազգային բյուրոն չի ստացել 45 օրվա ընթացքում, համարվում են ձեռնպահ մնացած: Վերոնշյալ ժամանակահատվածները հաշվարկվում են Միջազգային բյուրոյի շրջաբերականների ամսաթվերից: **Վերոնշյալ ընթացակարգից բխող ցանկացած փաստաթուղթ եւ դիտարկում ներկայացվում են ֆիզիկական կամ անվտանգ էլեկտրոնային միջոցներով, իսկ անդամ երկրի կողմից Միջազգային բյուրո ներկայացված փաստաթղթերի դեպքում՝ ստորագրվում համապատասխան անդամ երկրի պետական մարմնի պատշաճ լիազորված ներկայացուցչի կողմից: Սույն կետի իմաստով «անվտանգ էլեկտրոնային միջոցներ» արտահայտությունը նշանակում է տվյալների մշակման, պահպանման եւ փոխանցման համար օգտագործվող ցանկացած էլեկտրոնային միջոց, որն ապահովում է տվյալների հավաստիության, ամբողջականության եւ գաղտնիության պահպանումը Միջազգային բյուրոյի կամ անդամ երկրի կողմից վերը նշված փաստաթղթերի եւ դիտարկումների ներկայացման ընթացքում:**

2 Եթե առաջարկությունը վերաբերում է **Միության** Համաձայնագրին կամ դրա Եզրափակիչ արձանագրությանը, ապա միայն այդ Համաձայնագրի կողմ հանդիսացող անդամ երկրները կարող են մասնակցել 1-ին կետում նկարագրված ընթացակարգին:

Հոդված 143

Փոստային շահագործման խորհրդի կողմից Կանոնակարգում փոփոխություններ կատարելը

1 Կանոնակարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններով զբաղվում է Փոստային շահագործման խորհուրդը:

2 Կանոնակարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ցանկացած առաջարկություն ներկայացնելու համար պահանջվում է առնվազն մեկ անդամ երկրի աջակցությունը:

Հոդված 144

Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում ընդունված որոշումների մասին ծանուցելը

1 Կոնվենցիայում, Համաձայնագրերում եւ այդ ակտերի Եզրափակիչ արձանագրություններում կատարված փոփոխությունները հաստատվում են Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի կողմից՝ այդ մասին անդամ երկրների կառավարություններին ծանուցելով:

2 Փոստային շահագործման խորհրդի կողմից Կանոնակարգերում եւ դրանց Եզրափակիչ արձանագրություններում կատարված փոփոխությունների

մասին Միջազգային բյուրոն հաղորդում է անդամ երկրներին եւ նրանց կողմից նշանակված օպերատորներին: Նույնը կիրառվում է Կանոնադրության 39-րդ հոդվածի 3.2-րդ կետում եւ Համաձայնագրերի համապատասխան դրույթներում նշված մեկնաբանությունների նկատմամբ:

Հոդված 145

Կանոնակարգի եւ Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածում ընդունված այլ որոշումների ուժի մեջ մտնելը

1 Կանոնակարգը եւ դրանում կատարված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում դրանում նշված ամսաթվին, ինչպես որ որոշվում է Փոստային շահագործման խորհրդի կողմից, եւ մնում է ուժի մեջ անորոշ ժամանակով:

2 1-ին կետի դրույթների համաձայն՝ Միության՝ Համագումարների միջեւ ընդունվող ակտերում փոփոխություններ կատարելու մասին որոշումներն ուժի մեջ են մտնում դրանց մասին ծանուցելուց առնվազն երեք ամիս անց:

Գլուխ IV

Ֆինանսավորումը

Հոդված 146

Միության ծախսերի սահմանումը

1 Պահպանելով 2-6-րդ կետերի դրույթները՝ Միության մարմինների գործունեությանը վերաբերող տարեկան ծախսերը **2022-2025** թվականների համար չեն կարող գերազանցել **38,890,030** շվեյցարական ֆրանկը: Այն դեպքում, երբ **2025** թվականի համար նախատեսված Համագումարը հետաձգվում է, նույն առավելագույն շեմը կիրառվում է նաեւ **2025** թվականից հետո ընկած ժամանակահատվածի նկատմամբ:

2 Հաջորդ Համագումարի գումարման հետ կապված ծախսերը (քարտուղարության ճանապարհածախսը, տրանսպորտի վճարները, համաժամանակյա թարգմանության սարքավորումների տեղադրման ծախսերը, Համագումարի ընթացքում փաստաթղթերի կրկնօրինակման ծախսերը եւ այլն) չպետք է գերազանցեն 2,900,000 շվեյցարական ֆրանկի սահմանաչափը:

3 Վարչական խորհուրդն իրավասու է գերազանցել 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված սահմանաչափերը՝ հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության կողմից հաստատված աշխատավարձի սանդղակների, կենսաթոշակային վճարների կամ նպաստների բարձրացումը, այդ թվում նաեւ պաշտոնի ճշգրտումները՝ ժնեւում աշխատող իր անձնակազմի նկատմամբ կիրառելու համար:

4 Վարչական խորհուրդն իրավասու է նաեւ յուրաքանչյուր տարի ճշգրտել անձնակազմի հետ կապված ծախսերից բացի այլ ծախսերի չափը՝ հիմնվելով շվեյցարական սպառողական գների ինդեքսի վրա:

5 Չհակասելով 1-ին կետին՝ Վարչական խորհուրդը կամ ծայրահեղ հրատապության դեպքում՝ գլխավոր տնօրենը կարող է թույլատրել Միջազգային բյուրոյի շենքի հիմնական եւ չնախատեսված վերանորոգման ծախսերը հոգալու համար գերազանցել սահմանված սահմանաչափերը՝ պայմանով սակայն, որ դրանք չգերազանցեն տարեկան 125 000 շվեյցարական ֆրանկը:

6 Եթե 1-ին եւ 2-րդ կետերով նախատեսված գումարները բավարար չեն Միության անխափան գործունեությունն ապահովելու համար, ապա այդ սահմանաչափերը կարող են գերազանցվել միայն Միության անդամ երկրների մեծամասնության հաստատմամբ: Ցանկացած քննարկում ներառում է նման հարցումը հիմնավորող փաստերի ամբողջական նկարագրությունը:

Հոդված 147

Անդամ երկրների անդամավճարների կարգավորումը

1 Երկրները, որոնք միանում են Միությանը կամ ընդունվում են Միություն որպես անդամ, ինչպես նաեւ նրանք, որոնք դուրս են գալիս Միությունից, վճարում են իրենց անդամավճարներն այն ամբողջ տարվա համար, որի ընթացքում ուժի մեջ է մտնում նրանց ընդունումը կամ դուրս գալը:

2 Անդամ երկրներն իրենց անդամավճարները վճարում են Միության տարեկան ծախսերի համար նախապես՝ Վարչական խորհրդի կողմից հաստատված բյուջեի հիման վրա: Այդ անդամավճարները վճարվում են ոչ ուշ, քան այն ֆինանսական տարվա առաջին օրը, որին բյուջեն վերաբերում է: Այդ ամսաթվից հետո վճարման ենթակա գումարները գանձվում են Միության օգտին տոկոսներով՝ չորրորդ ամսից սկսած՝ տարեկան 5% տոկոսադրույքով:

3 Եթե անդամ երկրի կողմից Միությանը պարտադիր անդամավճարների գծով ապառքները, չհաշված տոկոսները հավասար են կամ ավելի են, քան

նախորդ երկու ֆինանսական տարիների համար այդ անդամ երկրի անդամավճարների գումարը, ապա այդ անդամ երկիրը կարող է անվերադարձ կերպով Միությանը փոխանցել այլ անդամ երկրների կողմից իրեն պարտք ամբողջ գումարը կամ դրա մի մասը՝ Վարչական խորհրդի կողմից սահմանված կարգին համապատասխան: Այս կերպ պարտավորությունների զիջման պայմանները որոշվում են անդամ երկրի, նրա պարտապանների/պարտատերերի եւ Միության միջեւ ձեռք բերված համաձայնությամբ:

4 Այն անդամ երկիրը, որն իրավական կամ այլ պատճառներով չի կարող իրականացնել այդ պարտավորությունների զիջումը, պարտավորվում է կազմել իր ապառքների աստիճանական մարման ժամանակացույց:

5 Բացառությամբ **Համագումարի կամ Վարչական խորհրդի կողմից որոշված հատուկ հանգամանքների՝** Միությանը պարտադիր անդամավճարների գծով ապառքների հատուցումը չի կարող տասը տարվանից ավելի երկարաձգվել: **Այն դեպքում, երբ Համագումարը կամ Վարչական խորհուրդը հաստատում է քսան տարուց ավելի ժամկետով վճարման համաձայնագիր, տարեկան ապառքների վճարման նվազագույն չափը պետք է լինի առնվազն համարժեք համաձայնագիրը ստորագրած անդամ երկրի տարեկան անդամավճարին:**

6 Նաեւ բացառիկ դեպքերում՝ **Համագումարի կամ Վարչական խորհրդի կողմից որոշված կարգով, յուրաքանչյուր մարմին** կարող է ազատել անդամ երկրին չվճարված տոկոսներից ամբողջությամբ կամ մասնակիորեն, եթե այդ երկիրն ապառքներով վճարել է իր պարտքերի ամբողջ մայր գումարը:

7 Նմանատիպ բացառիկ հանգամանքներում **Համագումարը կամ Վարչական խորհուրդը համապատասխան անդամ երկրի գրավոր խնդրանքով կարող է որոշել ազատել այդ անդամ երկրին ապառքներով վճարվող իր պարտքերից եւ անհապաղ չեղարկել նրա նկատմամբ կիրառված ավտոմատ պատժամիջոցները՝ այդ անդամ երկրի կողմից վճարման ենթակա՝ ապառքներով վճարվող պարտքերի (առանց դրա դիմաց գոյացած**

տոկոսների) ընդհանուր գումարի առնվազն կեսին համարժեք գումարի վճարման պայմանով:

8 Համագումարը կամ Վարչական խորհուրդը ապառքներով արտահայտված երկարաժամկետ պարտքեր ունեցող անդամ երկրի գրավոր խնդրանքով կարող է նաեւ որոշում կայացնել բացառիկ կարգով ազատել այդ անդամ երկրին ապառքներով վճարվող իր պարտքերից եւ անհապաղ չեղարկել նրա դեմ կիրառված ավտոմատ պատժամիջոցները՝ պայմանով, որ համապատասխան անդամ երկիրը վճարի Միության տարեկան ծախսերի համար նախատեսված իր վերջին հինգ տարվա պարտադիր անդամավճարները (ներառյալ ընթացիկ ֆինանսական տարին եւ առանց դրանց դիմաց գոյացած տոկոսների):

8.1 8-րդ կետի նպատակներով «ապառքներով վճարվող երկարաժամկետ պարտքեր» արտահայտությունը սահմանվում է որպես ապառքներով վճարվող ցանկացած գումար (ներառյալ տոկոսները), որը վերաբերում է Միության տարեկան ծախսերի համար նախատեսված՝ վերջին հինգ ֆինանսական տարվանից ավելի երկար ժամանակահատվածում գոյացած պարտադիր անդամավճարներին:

8.2 Հավասարապես 8-րդ կետի նպատակներով եւ հատկապես 151-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված առավել քիչ զարգացած երկրների եւ զարգացող փոքր կղզի-պետությունների դեպքում Համագումարը կամ Վարչական խորհուրդը կարող է բացառիկ կարգով որոշել, որ համապատասխան անդամ երկրի «պարտադիր անդամավճարների վերջին հինգ տարին» հաշվարկվում է՝ հիմնվելով այն ընթացիկ անդամավճարների դասի վրա, որին այդ անդամ երկիրը պատկանում է, եւ որի դեպքում համապատասխան ընթացիկ անդամավճարի դասի գումարը բազմապատկվում է հինգ անգամ:

9 151-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված առավել քիչ զարգացած երկրների եւ զարգացող փոքր կղզի-պետությունների դեպքում, որոնք

իրավասու են օգտվել սույն հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերում նշված վճարման բացառիկ կարգավորումներից որեւէ մեկից, համապատասխան անդամ երկրի կողմից վճարված գումարի առնվազն 50%-ը նախատեսվում է Միության կողմից ղեկավարվող՝ այդ նույն անդամ երկրի շահերին ուղղված փոստային տեխնիկական աջակցության ծրագրերի համար:

10 Սույն հոդվածի 7-րդ եւ 8-րդ կետերում նշված վճարման բացառիկ կարգավորումների շրջանակում ազատված ցանկացած մայր գումար կամ տոկոսագումար չի չեղարկվում, այլ հետաձգվում է Միության կողմից տրամադրվում է՝ համաձայն իր համապատասխան ֆինանսական կանոնների: Հետագայում համապատասխան անդամ երկրի նկատմամբ ավտոմատ պատժամիջոցների կիրառման դեպքում վերոնշյալ գումարները եւս մեկ անգամ գրանցվում են Միության կողմից՝ անմիջապես ուժի մեջ մտնելու պայմանով, որպես տվյալ անդամ երկրի՝ ապառքներով վճարվող պարտքեր:

11 Ապառքներով հաշիվների մասով Վարչական խորհրդի կողմից հաստատված աստիճանական մարման ժամանակացույցի շրջանակներում անդամ երկիրը կարող է ազատվել նաեւ կուտակված կամ գոյացող տոկոսներից ամբողջությամբ կամ մասնակիորեն. այդ ազատումը, այնուամենայնիվ, ենթակա է աստիճանական մարման ժամանակացույցի ամբողջական եւ ճշտապահ կատարմանն առավելագույնը տապալ տարվա համաձայնեցված ժամկետում:

12 3-11-րդ կետերի դրույթները համանման կերպով կիրառվում են թարգմանության ծախսերի նկատմամբ, որոնց հաշիվները Միջազգային բյուրոն ներկայացնում է լեզվական խմբերին պատկանող անդամ երկրներին:

13 Միջազգային բյուրոն հաշիվներն ուղարկում է անդամ երկրներ՝ դրանց վճարման ժամկետից առնվազն երեք ամիս առաջ: Հաշիվների բնօրինակներն ուղարկվում են համապատասխան անդամ երկրի կողմից տրամադրված ճիշտ հասցեով: Հաշիվների էլեկտրոնային պատճեններն ուղարկվում են էլեկտրոնային փոստով որպես նախնական ծանուցում կամ ահազանգ:

14 Բացի այդ, Միջազգային բյուրոն անդամ երկրներին տրամադրում է հստակ տեղեկատվություն ամեն անգամ, երբ նրանցից տոկոսագումար է գանձում որոշակի հաշիվների ժամկետանց վճարման համար, այնպես, որ անդամ երկրները կարողանան հեշտությամբ ստուգել, թե տոկոսագումարները որ հաշիվներին են համապատասխանում:

Հոդված 148

Ֆինանսավորման անբավարարությունը

1 Միության շրջանակում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ ֆինանսավորման անբավարարությունը ծածկելու համար: Դրա չափը սահմանում է Վարչական խորհուրդը: Հիմնադրամը պահվում է հիմնականում բյուջեի ավելցուկային միջոցներով եւ կարող է օգտագործվել նաեւ բյուջեն հավասարակշռելու կամ անդամ երկրների անդամավճարների գումարը նվազեցնելու համար:

2 Միության ֆինանսական միջոցների ժամանակավոր անբավարարության դեպքում Շվեյցարիայի Համադաշնության կառավարությունն անհրաժեշտ կարճաժամկետ ավանսներ է տրամադրում Միությանը՝ փոխադարձ համաձայնությամբ սահմանված պայմաններով:

Հոդված 149

Հաշվապահական հաշվառման եւ հաշվետվությունների նկատմամբ վերահսկողությունը

Շվեյցարիայի Համադաշնության կառավարությունը, առանց ծախսեր կրելու, վերահսկողություն է իրականացնում Միջազգային բյուրոյի հաշվապահական

հաշվառման եւ հաշվետվությունների նկատմամբ՝ Համագումարի կողմից սահմանված լիազորությունների սահմաններում:

Հոդված 150

Ավտոմատ պատժամիջոցները

1 Ցանկացած անդամ երկիր, որը չի կարողանում կատարել **147-րդ հոդվածի 3-րդ կետով** նախատեսված փոխանցումը, եւ որը չի համաձայնում ներկայացնել Միջազգային բյուրոյի կողմից **147-րդ հոդվածի 4-րդ կետի** համաձայն առաջարկված աստիճանական մարման ժամանակացույց, կամ որը չի կատարում այդ ժամանակացույցով սահմանված պահանջները, ինքնաբերաբար կորցնում է Համագումարում եւ Կառավարման խորհրդի եւ Փոստային շահագործման խորհրդի նիստերում քվեարկելու իր իրավունքը, ինչպես նաեւ այլեւս չի կարող անդամակցել այդ երկու խորհուրդներին:

2 Ավտոմատ պատժամիջոցներն անպայմանորեն եւ անմիջապես ուժի մեջ մտնելու պայմանով չեղարկվում են, երբ համապատասխան անդամ երկիրը վճարում է Միությանը պարտք պարտադիր անդամավճարների ապառքները՝ կապիտալով եւ տոկոսներով, կամ համաձայնում է Միության հետ՝ ներկայացնել ապառքների աստիճանական մարման ժամանակացույց:

Հոդված 151

Անդամավճարների դասերը

1 Անդամ երկրները օգնում են ծածկել Միության ծախսերը՝ համաձայն անդամավճարի այն դասի, որին պատկանում են: **Անդամավճարների դասերը**

կազմվում են՝ սկսած մեկ միավորից, եւ աստիճանաբար բարձրանում մեկ միավորից մինչեւ մի մակարդակ, որը սահմանված է Միավորված ազգերի կազմակերպության ծախսերի բաշխման գնահատումների վերջին սանդղակի հիման վրա: Անդամ երկրներն ընտրում են իրենց անդամավճարի դասը՝ հիմնվելով իրենց տնտեսական կարողությունների վրա՝ միեւնույն ժամանակ հաշվի առնելով գնահատումների վերոնշյալ սանդղակը: Միավորված ազգերի կազմակերպության կողմից որպես առավել քիչ զարգացած երկրներ թվարկվող անդամ երկրները վճարում են անդամավճարների միավորի կեսը: 200.000-ից պակաս բնակչություն ունեցող զարգացող փոքր կղզի-պետությունները (ըստ Միավորված ազգերի կազմակերպության ցանկի) վճարում են անդամավճարի միավորի մեկ տասներորդ մասը:

2 Չհակասելով 1-ին կետում թվարկված անդամավճարների դասերին՝ ցանկացած անդամ երկիր կարող է ընտրել ավելի մեծ թվով միավորներով անդամավճարների կատարում՝ Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածին համարժեք նվազագույն ժամկետով: Փոփոխության մասին հայտարարությունն արվում է ամենաուշը Համագումարում: Համագումարների միջեւ ընկած ժամանակահատվածի վերջում անդամ երկիրն ավտոմատ կերպով վերադառնում է իր սկզբնական թվով անդամավճարների միավորներին, եթե չի որոշում պահպանել ավելի մեծ թվով միավորներով անդամավճարը: Հավելյալ անդամավճարների վճարումը համապատասխանաբար ավելացնում է ծախսերը:

3 Անդամ երկրներն ընտրում են իրենց միավորների թիվը Միություն ընդունվելիս կամ Միությանը միանալիս՝ հաշվի առնելով Միավորված ազգերի կազմակերպության ծախսերի բաշխման գնահատումների վերջին սանդղակը՝ Կանոնադրության 20-րդ հոդվածի 4-րդ կետում սահմանված ընթացակարգի համաձայն:

4 Միավորված ազգերի կազմակերպության ծախսերի բաշխման գնահատումների սանդղակի հիման վրա գնահատված տնտեսական

հնարավորություններից բարձր վճարումներ կատարող անդամ երկրներն իրավունք ունեն նվազեցնելու իրենց միավորների թիվը Համագումարի յուրաքանչյուր շրջափուլում մինչև առավելագույնը երկու միավորով՝ պայմանով, որ դա չի հանգեցնում ավելի ցածր անդամավճարի, քան նրանք կվճարեին Միավորված ազգերի կազմակերպության ծախսերի բաշխման գնահատումների ընթացիկ սանդղակով: Ցանկացած նման նվազեցման ծախսերը համերաշխության սկզբունքով կրում են բոլոր անդամ երկրները՝ Կանոնադրության 20-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով: Միավորված ազգերի կազմակերպության ծախսերի բաշխման գնահատումների սանդղակի հիման վրա գնահատված տնտեսական հնարավորություններից ցածր մակարդակով վճարումներ կատարող անդամ երկրներին կոչ է արվում Համագումարի յուրաքանչյուր շրջափուլում ավելացնել իրենց միավորների թիվն առնվազն երկուսով, մինչև կհասնեն վերը նշված գնահատումների ընթացիկ սանդղակի մակարդակին: Այն անդամ երկրները, որոնք չեն անում սա, չեն օգտվում անդամավճարի միավորի արժեքի նվազեցումից, որը բխում է անդամավճարի միավորների ընդհանուր թվի աճից:

5 Այնուամենայնիվ, բացառիկ հանգամանքներում, ինչպիսիք են բնական աղետները, որոնց համար անհրաժեշտ են միջազգային աջակցության ծրագրեր, Վարչական խորհուրդը, անդամ երկրի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում կարող է թույլատրել երկու Համագումարների միջև ընկած ժամանակահատվածում մեկ անգամ անդամավճարի դասի ժամանակավոր նվազեցում, եթե նշված անդամը հաստատում է, որ այլևս չի կարող պահպանել իր անդամավճարը սկզբնապես ընտրված դասով:

6 5-րդ կետի կիրառման դեպքում անդամավճարի դասի ժամանակավոր նվազեցումը կարող է Վարչական խորհրդի կողմից թույլատրվել առավելագույնը երկու տարի ժամկետով կամ մինչև հաջորդ Համագումարը՝ կախված այն հանգամանքից, թե որն ավելի շուտ տեղի կունենա: Նշված ժամկետի ավարտից

հետո համապատասխան երկիրն ավտոմատ կերպով վերադառնում է իր անդամավճարի սկզբնական դասին:

7 Ավելի բարձր դասի **փոփոխությունները** ենթակա չեն որեւէ սահմանափակման:

Հոդված 152

Միջազգային բյուրոյի կողմից տրամադրվող նյութերի համար վճարումը

Միջազգային բյուրոյի կողմից անդամ երկրներին եւ նրանց կողմից նշանակված օպերատորներին վճարման դիմաց տրամադրվող նյութերի համար վճարվում է հնարավորինս կարճ ժամկետում եւ ամենաուշը վեց ամսվա ընթացքում՝ սկսած Բյուրոյի կողմից հաշիվն ուղարկելու ամսին հաջորդող ամսվա առաջին օրվանից: Այդ ժամկետից հետո վճարման ենթակա գումարները գանձվում են Միության օգտին տոկոսներով՝ տարեկան 5% տոկոսադրույքով, որը հաշվարկվում է այդ ժամկետի ավարտի ամսաթվից:

Հոդված 153

Օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմինների կազմակերպումը

1 ՓՇԽ-ն Վարչական խորհրդի հաստատման պայմանով կարող է ստեղծել կամավոր միջոցներով ֆինանսավորվող մի շարք օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմիններ՝ կազմակերպելու Կանոնադրության 18-րդ հոդվածի համաձայն իր իրավասության շրջանակներում ներառված գործառնական, առեստրային, տեխնիկական եւ տնտեսական գործունեությունները, որոնք, սակայն, չեն կարող ֆինանսավորվել կանոնավոր բյուջեով:

2 ՓՇԽ-ի ներքո այդպիսի մարմին ստեղծելու դեպքում ՓՇԽ-ն որոշում է մարմնի գործունեության կարգի ընդհանուր շրջանակը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով Միության՝ որպես միջկառավարական կազմակերպության հիմնարար կանոններն ու սկզբունքները, եւ ներկայացնում ՎԽ-ի հաստատմանը: Ընդհանուր շրջանակը ներառում է հետեւյալ բաղադրիչները՝

2.1 մանդատը,

2.2 ներկայացվածությունը, այդ թվում նաեւ մասնակից անդամների կատեգորիաները,

2.3 որոշումների կայացման կանոնները, այդ թվում նաեւ դրա ներքին կառուցվածքը եւ հարաբերությունները Միության այլ մարմինների հետ,

2.4 քվեարկության եւ ներկայացուցչության սկզբունքները,

2.5 ֆինանսավորումը (բաժանորդագրության, օգտագործման վճարները եւ այլն),

2.6 քարտուղարության եւ կառավարման կառույցի կազմը:

3 Օգտագործողների կողմից ֆինանսավորվող յուրաքանչյուր օժանդակող մարմին իր գործունեությունը կազմակերպում է ինքնավար ձեւով՝ ՓՇԽ-ի կողմից որոշված եւ ՎԽ-ի կողմից հաստատված ընդհանուր շրջանակներում, եւ պատրաստում տարեկան հաշվետվություն իր գործունեության վերաբերյալ՝ ՓՇԽ-ի քննարկմանը ներկայացնելու համար:

4 Վարչական խորհուրդը սահմանում է աջակցության ծախսերին վերաբերող կանոնները, որոնք օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմինները պետք է վճարեն կանոնավոր բյուջե, եւ հրապարակում դրանք ՀՓՄ-ի ֆինանսական կանոնակարգում:

5 Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենը կառավարում է օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմինների քարտուղարության աշխատանքը՝ համաձայն Աշխատակազմի համապատասխան

կանոնակարգերի եւ կանոնների, որոնք կիրառելի են օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմինների համար ներգրավված անձնակազմի նկատմամբ: Օժանդակող մարմինների քարտուղարությունը Միջազգային բյուրոյի անբաժանելի մասն է կազմում:

6 Սույն հոդվածի համաձայն ստեղծված օգտագործողների կողմից ֆինանսավորվող օժանդակող մարմինների վերաբերյալ տեղեկատվությունը հաղորդվում է Համագումարին՝ դրանց ստեղծումից հետո:

ԳԼՈՒԽ V

Արբիտրաժ

Հոդված 154

Արբիտրաժային ընթացակարգը

1 Անդամ երկրների միջեւ վեճն արբիտրաժի միջոցով լուծվելու դեպքում յուրաքանչյուր անդամ երկիր պետք է գրավոր տեղեկացնի մյուս կողմին վեճի առարկայի մասին եւ արբիտրաժային գործընթաց սկսելու մասին ծանուցման միջոցով հայտնի նրան, որ ցանկանում է դիմել արբիտրաժ:

2 Եթե վեճը վերաբերում է գործառնական կամ տեխնիկական բնույթի հարցերին, ապա յուրաքանչյուր անդամ երկիր կարող է խնդրել իր կողմից նշանակված օպերատորին գործելու հաջորդող կետերով նախատեսված ընթացակարգի համաձայն եւ պատվիրակել այդ լիազորությունն իր օպերատորին: Համապատասխան անդամ երկրին պետք է տեղեկացնել վարույթի ընթացքի եւ արդյունքի մասին: Համապատասխան անդամ երկրները կամ նշանակված օպերատորներն այսուհետ նշվում են որպես «արբիտրաժի կողմեր»:

3 Արբիտրաժի կողմերը նշանակում են մեկ կամ երեք արբիտրներ:

4 Եթե արբիտրաժի կողմերը որոշում են նշանակել երեք արբիտր, ապա յուրաքանչյուր կողմ 2-րդ կետի համաձայն ընտրում է վեճի մեջ ուղղակիորեն չներգրավված որեւէ անդամ երկիր կամ նշանակված օպերատոր՝ որպես արբիտր հանդես գալու համար: Երբ մի քանի անդամ երկրներ եւ (կամ) նշանակված օպերատորներ հանդես են գալիս ընդհանուր գործով, նրանք այս դրույթների նպատակներով համարվում են միայն որպես մեկ կողմ:

5 Եթե կողմերը համաձայնում են երեք արբիտրների նշանակմանը, ապա երրորդ արբիտրի մասով կողմերի միջեւ համատեղ համաձայնություն է ձեռք բերվում, եւ պարտադիր չէ, որ այն լինի անդամ երկրից կամ նշանակված օպերատորի շրջանակից:

6 Եթե վեճը վերաբերում է Համաձայնագրերից մեկին, ապա արբիտրները կարող են նշանակվել միայն այդ Համաձայնագրի կողմ հանդիսացող անդամ երկրներից:

7 Արբիտրաժի կողմերը կարող են համատեղ համաձայնության գալ նշանակելու մեկ արբիտր, որը պարտադիր չէ, որ լինի անդամ երկրից կամ նշանակված օպերատորից:

8 Եթե արբիտրաժի կողմերից մեկը կամ երկուսն էլ արբիտրաժը սկսելու մասին ծանուցման օրվանից երեք ամսվա ընթացքում չեն նշանակում արբիտր կամ արբիտրներ, ապա Միջազգային բյուրոն նման պահանջի դեպքում ինքն է կոչ անում նախաձեռնող անդամ երկրին նշանակելու արբիտր, կամ ավտոմատ կերպով ինքն է նշանակում: Միջազգային բյուրոն չպետք է ներգրավվի քննարկումներում կամ հանդես գա որպես արբիտր, եթե կողմերի կողմից փոխադարձաբար այլ բան չի պահանջվում: **Վերջին դեպքում Միջազգային բյուրոն հանդես է գալիս որպես արբիտր վճարովի հիմունքներով՝ Վարչական խորհրդի կողմից ընդունված վեճերի կարգավորման համապատասխան ընթացակարգերի համաձայն:**

9 Արբիտրաժի կողմերը կարող են փոխադարձաբար համաձայնության գալ կարգավորելու վեճը՝ ցանկացած պահի մինչև արբիտրի կամ արբիտրների կողմից վճիռ կայացնելը: Չեղյալ համարելու մասին ցանկացած ծանուցում պետք է գրավոր ներկայացվի Միջազգային բյուրո՝ կողմերի կողմից այդպիսի համաձայնության գալուց հետո տասն օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ կողմերը համաձայնում են չեղյալ համարել արբիտրաժային գործընթացը, արբիտրը կամ արբիտրները կորցնում են այդ հարցի վերաբերյալ որոշում կայացնելու իրենց լիազորությունները:

10 Արբիտրը կամ արբիտրները պետք է վեճի վերաբերյալ որոշում կայացնեն՝ հիմնվելով իրենց առջև եղած փաստերի եւ ապացույցների վրա: Վեճին վերաբերող ամբողջ տեղեկատվությունը պետք է հաղորդվի երկու կողմերին եւ արբիտրին կամ արբիտրներին:

11 Արբիտրի կամ արբիտրների որոշումն ընդունվում է ձայների մեծամասնությամբ, եւ այդ մասին տեղեկացվում է Միջազգային բյուրոյին եւ կողմերին՝ արբիտրաժ սկսելու մասին ծանուցման օրվանից վեց ամսվա ընթացքում:

12 Արբիտրաժային վարույթը գաղտնի է, եւ միայն վեճի ամփոփ նկարագրությունն ու որոշումն են գրավոր փոխանցվում Միջազգային բյուրո՝ որոշումը կողմերին հանձնելուց հետո տասն օրվա ընթացքում:

13 Արբիտրի կամ արբիտրների որոշումը վերջնական է եւ պարտադիր կողմերի համար եւ ենթակա չէ բողոքարկման:

14 Արբիտրաժի կողմերն անհապաղ կատարում են արբիտրի կամ արբիտրների որոշումը: Եթե անդամ երկիրը նշանակված օպերատորին պատվիրակում է արբիտրաժային ընթացակարգ սկսելու եւ դրան հետեւելու լիազորություն, ապա անդամ երկիրը պատասխանատվություն է կրում նշանակված օպերատորի կողմից արբիտրի կամ արբիտրների որոշման կատարումն ապահովելու համար:

Գլուխ VI

Լեզուների օգտագործումը Միության շրջանակներում

Հոդված 155

Միջազգային բյուրոյի աշխատանքային լեզուները

Միջազգային բյուրոյի աշխատանքային լեզուներն են ֆրանսերենը և անգլերենը:

Հոդված 156

Փաստաթղթավարության, քննարկումների և պաշտոնական նամակագրության համար օգտագործվող լեզուները

1 Միության կողմից հրապարակվող փաստաթղթերում օգտագործվում են ֆրանսերենը, անգլերենը, արաբերենը և իսպաներենը: Օգտագործվում են նաև չինարենը, գերմաներենը, պորտուգալերենը և ռուսերենը՝ պայմանով, որ այս լեզուներով հրապարակվեն միայն ամենակարեւոր հիմնական փաստաթղթերը: Այլ լեզուներ նույնպես կարող են օգտագործվել այն պայմանով, որ պահանջ ներկայացրած անդամ երկրները կրեն բոլոր ներառված ծախսերը:

2 Անդամ երկիրը կամ երկրները, որոնք պահանջ են ներկայացրել պաշտոնական լեզվից բացի այլ լեզվի օգտագործման մասով, լեզվական խումբ են կազմում:

3 Փաստաթղթերը Միջազգային բյուրոյի կողմից հրապարակվում են պաշտոնական լեզվով և պատշաճ ձեւով ստեղծված այլ լեզվական խմբերի լեզուներով ուղղակիորեն կամ այդ խմբերի տարածաշրջանային գրասենյակների

միջնորդությամբ՝ Միջազգային բյուրոյի հետ համաձայնեցված ընթացակարգերին համապատասխան: Տարբեր լեզուներով հրապարակումն իրականացվում է ընդհանուր ստանդարտի համաձայն:

4 Ուղղակիորեն Միջազգային բյուրոյի կողմից հրապարակվող փաստաթղթերը հնարավորության դեպքում միաժամանակ տարածվում են պահանջվող տարբեր լեզուներով:

5 Անդամ երկրների կամ անդամ երկրների կողմից նշանակված օպերատորների եւ Միջազգային բյուրոյի, ինչպես նաեւ վերջինիս եւ արտաքին կազմակերպությունների միջեւ նամակագրությունը կարող է փոխանակվել ցանկացած լեզվով, որի համար Միջազգային բյուրոն թարգմանչական ծառայություն ունի:

6 Ցանկացած լեզվով թարգմանության ծախսերը, ներառյալ՝ 5-րդ կետի **եւ 137-րդ հոդվածի** կիրառումից բխող ծախսերը, կրում է այն լեզվական խումբը, որը պահանջ է ներկայացրել այդ լեզվի մասով: Պաշտոնական լեզուն օգտագործող անդամ երկրները ոչ պաշտոնական փաստաթղթերի թարգմանության համար կատարում են միանվագ վճար, որի չափը, ըստ անդամավճարի միավորի, նույնն է, ինչ վճարը, որ Միջազգային բյուրոյի մյուս աշխատանքային լեզուն օգտագործող անդամ երկրները կատարում են: Փաստաթղթերի տրամադրման հետ կապված բոլոր մյուս ծախսերը հոգում է Միությունը: Ծախսերի առավելագույն շեմը, որ Միությունը պետք է կրի փաստաթղթերը չինարեն, գերմաներեն, պորտուգալերեն եւ ռուսերեն ներկայացնելու համար, սահմանվում է Համագումարի բանաձեւով:

7 Լեզվական խմբի կողմից կատարվող ծախսերը բաշխվում են այդ խմբի անդամների միջեւ՝ Միության ծախսերի համար նրանց կատարած վճարումների համամասնությամբ: Այդ ծախսերը կարող են բաժանվել լեզվական խմբի անդամների միջեւ՝ համաձայն այլ համակարգի՝ պայմանով, որ համապատասխան անդամ երկրները համաձայնեն դրան եւ խմբի խոսնակի միջնորդությամբ տեղեկացնեն Միջազգային բյուրոյին իրենց որոշման մասին:

8 Միջազգային բյուրոն ուժի մեջ է դնում անդամ երկրի կողմից պահանջվող լեզվի ընտրության ցանկացած փոփոխություն երկու տարին չգերազանցող ժամկետից հետո:

9 Միության մարմինների նիստերում քննարկումների համար ընդունելի են ֆրանսերենը, անգլերենը, իսպաներենը, ռուսերենը եւ արաբերենը՝ թարգմանության համակարգի միջոցով՝ էլեկտրոնային սարքավորումներով կամ առանց դրանց. ընտրությունը թողնվում է նիստի կազմակերպիչների հայեցողությանը՝ Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենի եւ համապատասխան անդամ երկրների հետ խորհրդակցելուց հետո:

10 9-րդ կետում նշված քննարկումների եւ նիստերի համար ընդունելի են նաեւ այլ լեզուներ:

11 Այլ լեզուներ օգտագործող պատվիրակությունները կազմակերպում են համաժամանակյա թարգմանություն 9-րդ կետում նշված լեզուներից մեկով՝ նույն կետում նշված համակարգով, երբ կարող են կատարվել անհրաժեշտ տեխնիկական փոփոխություններ, կամ առանձին թարգմանիչների միջոցով:

12 Թարգմանչական ծառայությունների ծախսերը բաշխվում են նույն լեզուն օգտագործող անդամ երկրների միջեւ՝ Միության ծախսերի համար նրանց կատարած վճարումների համամասնությամբ: Այնուամենայնիվ, տեխնիկական սարքավորումների տեղադրման եւ պահպանման ծախսերը հոգում է Միությունը:

13 Անդամ երկրները եւ (կամ) նրանց կողմից նշանակված օպերատորները կարող են գալ փոխըմբռնման՝ կապված միմյանց հետ հարաբերություններում պաշտոնական նամակագրության համար օգտագործվող լեզվի հետ: Նման փոխըմբռնման բացակայության դեպքում օգտագործվող լեզուն ֆրանսերենն է:

Գլուխ VII

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 157

Ընդհանուր կանոնակարգին վերաբերող առաջարկությունների ընդունման պայմանները

Ուժի մեջ մտնելու համար Համագումարին ներկայացված սույն Ընդհանուր կանոնակարգին վերաբերող առաջարկությունները հաստատվում են Համագումարում ներկայացված եւ քվեարկելու իրավունք ունեցող անդամ երկրների մեծամասնության կողմից: Միության՝ քվեարկելու իրավունք ունեցող անդամ երկրների առնվազն երկու երրորդը պետք է ներկա լինի քվեարկությանը:

Հոդված 158

Միավորված ազգերի կազմակերպության հետ կնքվող համաձայնագրերին վերաբերող առաջարկությունները

157-րդ հոդվածում նշված հաստատման պայմանները հավասարապես կիրառվում են այն առաջարկությունների նկատմամբ, որոնք նախատեսված են Համաշխարհային փոստային միության եւ Միավորված ազգերի կազմակերպության միջեւ կնքվող համաձայնագրերում փոփոխություններ կատարելու համար, այն դեպքերում, եթե այդ Համաձայնագրերով չեն սահմանվում դրանցում պարունակվող դրույթներում փոփոխություններ կատարելու պայմաններ:

Հոդված 159

Ընդհանուր կանոնակարգն ուժի մեջ **մտնելը** եւ գործողության ժամկետը

Ընդհանուր կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ին եւ ուժի մեջ է մնում անորոշ ժամկետով:

Ի հաստատումն որի՝ անդամ երկրների կառավարությունների լիազորված ներկայացուցիչները ստորագրեցին սույն Ընդհանուր կանոնակարգը մեկ բնօրինակից, որն ի պահ է հանձնվում Միջազգային բյուրոյի գլխավոր տնօրենին: Դրա պատճենը **Միության** Միջազգային բյուրոյի կողմից փոխանցվում է **անդամ երկրներից** յուրաքանչյուրին:

Կատարված է Դոհայում 2012 թվականի հոկտեմբերի 11-ին: